

# ԵՏՅՐԱՏԻ ԼԺԱՆԱԳԻՆ ԻՐԱԴԱՐԱՆ

№ 133—134

№ 133—134

ԱԶԱՏ ՎԵՏՈՒՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՅԵՎ  
ՊՈԵՄՆԵՐ

891.99  
4-75

ԵՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԹԵՐԵՎԱՆ 1936



12 MAR 2011

ՊԵՏՃՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 133-134

№ 133-134

891.99

4-75

ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

uy.

4804  
95514  
2101

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՅԵՎ  
ՊՈԵՄՆԵՐ

3432



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1936



12 .08. 2013

57649

Պատ. խմբագիր՝    
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան  
Սրբազրիչ՝ Ս. Շահբազյան

ԴԼ № 2099. Հրատ. 3703  
Պատվեր 661. Տիրաժ 5000

Լ Ի Ր Ի Կ Ա



# Լ ՈՒՍԱՐԱՅԻՆ

Լուսարացին,  
Լացին, լացին  
Վարդերը՝ վառ թերթեր բացին:

Լուսարացին,  
Ջինջ, լուսածին  
Հավքերն ուրախ թռան, գացին:

Լուսարացին,  
Ուռին, հացին  
Առլի ափին քնքուշ լացին:

Լուսարացին,  
Շող ու թացին  
Յերգերս թռան ու թնդացին:

1915

Մայիս

Բագու



Փ Ո Ք Ր Ի Կ Լ Ր Ա Գ Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ

Խարտյաշ մաղերնով տղա, լճակ աչերնով տղա,  
Յուրտ ե, հազում ես անվերջ, թշվառ, կմեռնես  
հազեդ:

Տոկուն, համարձակ տղա, յեռուն փողոցի տղա,  
Վազիր ու կանչիր ուժգին—Նոր լճւր, հեռագիր,  
գազեթ:

Բորիկ վռտներով տղա, առույգ, կիսամերկ տղա,  
Արագ անցնում ես մայթեն, մայթը թնդում ե վազեդ:  
Հպարտ, աշխատող տղա, մրի, զրկանքի տղա,  
Կանչիր, անցորդին կանչիր—Նոր լճւր, հեռագիր,  
գազեթ:

Սիրուն, սրիկա տղա, անտուն, շրջմոլիկ տղա,  
Ամենքը սիրում են քեզ, դյուրթված մանկական նազեդ:  
Խայթող ու հեգնող տղա, գգվանք անարգող տղա,  
Թռիլ, բարձրաձայն կանչիր—Նոր լճւր, հեռագիր,  
գազեթ:

Փոքրիկ, տաս տարեւ տղա, ըմբոստ, մաքառող տղա,  
Հոսում ե քրտինք ճակտեդ, այտեդ ու փոշոտ մաղեդ:  
Փողոց քնացող տղա, անկյուն կուշ լեկնած տղա,  
Կանչիր, քնիդ մեջ կանչիր—Յուրտ ե, մրսում եմ,  
գազեթ:

1917

Մ ա Ր Տ

Թ Ի Ֆ Լ Ի Ս



## Ա Յ Ս Ո Ր Ե Ր Ո Ւ Մ Ը

Այնքան անդունդ կա անտակ ու լեռնացած  
հորձանքներ,

Այնքան տենչանք ու կրակ այս որերումը, այնքան:  
Յերկու աշխարհ թշնամի ու դեմ առ դեմ են կանգնել—  
Բրունցքվորված մի բանակ ու բռնատենչ հին արքան:

Այնքան հմայք կա ու հույզ և խոլակա խոյանքներ,  
Այնքան արյուն կա հոսող այս որերումը, այնքան:  
Յեւ ռվ կարող ե հիմի շվարանքով լուռ կանգնել,  
Դառնալ անհույզ խրտվիլակ՝ դառնալ անսիրտ  
և անկամ:

Այնքան սրտեր կան վառված գալիքների կարոտով,  
Այնքան վառող կծխա խրամներում, այնքան:  
Յերգն իմ հյուսեմ ցասումի, ատելութան վառողով,  
Քանի դեռ կան աշխարհում վոսկեհորթեր և արքան:

1917

Մ ա Ր Տ

Թիֆլիս

## Մ Ա Յ Ի Ս Ա Կ Ա Ն

Հեղեղի պես յեկանք այսոր վողողելու փողոցը մեծ,  
Մեր մանկության որորանը հին, ուր զրկանքն եր  
վոր մեզ ծնեց:

Փողոցներով այս աղմկոտ, վոլոր ու ձիգ, լայն և  
անձուկ,  
Անցնում են այժմ շարքերը մեր խրոխտաքայլ ու  
թեանցուկ:

Մոռացումի փողիներին հանձնեցինք մենք ցավ ու  
կական:  
Հզոր ե մեր յերթը ներկա, փոթորկածին ու մոգական:  
Մենք կերպողները գալիքի, աշխատանքի բանակն ենք  
հաղթ:

Քանդում ենք այժմ աշխարհը հին, կռում ենք նոր  
արև ու բախտ:

Մերն ե այսոր աշխարհը վառ ու կյանքը նոր, յեռուն  
և ալ:

Տենչում ենք մենք պալքար, թռիչք, տենչում ենք  
մենք խինդով հեալ:

Հալացքը մեր արևներին՝ այսոր իջանք փողոցը մեծ,  
Ուր մալթերի վրա յերեկ բիրտ զրկանքն եր վոր մեզ  
ծնեց:







Ձ Մ Ե Ռ Ա Յ Ի Ն

Ս եկիկ մեկիկ արծաթվում են, արծաթվում են  
մազերըս սև:

Գալիս անցնում են տարիներ և ակոսում դեմքս վողորկ:  
Բայց սիրտըս բորբ ու բաբախուն, ժխորատենչ  
կանգնած դրսև,

Վորպես կարմիր արնոտ դրոշ՝ վորպես արև, վորպես  
բողոք:

Ձի սողոսկի հույզերիս մեջ կասկածը մութ, հուսալքում:  
Ձի սաքսոս սիրտս չերբեք աշխարհի մեջ կանգնած  
դրսև:

Յես կմնամ նորից համառ, կրկին խիզախ և աննկուն,  
Իմ հույզերում կա վառ խարոռյկ, սիրտս յերբեք  
դեռ չի մրսել:

Յես անցել եմ յերկար ճամբա թեժ պայքարի  
խրամներով:

Արշալիներումս առաջընթաց չես չեմ յեղել վերջինս  
խակի:

Հին աշխարհի հույզերի դեմ յեղել եմ յես միշտ  
անսերող,  
Վորպես պահակ, ինչպես զինվոր, վոնց վոր չեկիստ  
Ձերժինակի:

Հարթ դաշտերի, սեպ սարերի սրտում փռվում ե  
ձյունե թև:

Անծայրածիր և անեղերք ձմեռային մի ձերմակ ծով:  
Թվում ե հողը նիրհ մտած յերազանքով լուռ ու թեթև,  
Կարծես քաշում ե խոր յերկունք գարնանածին քաղցր  
կսկիծով:

Հուռթի հողի խոր արգանդում, թևերի տակը նուրբ  
ձյունի,

Քանի քանի կյանք կա շնչող, վորքան տենչանք ու  
յեռուղեռ:

Հողն իր սրտում գարնան համար տարերքի դեմ  
պայքար ունի,

Յեվ արևի, նոր ուրերի ու բերկրանքի յեռուն հույզեր:

Իմ սրտումս ել խոր, զգայուն խլրտում ե աշխարհը մի,  
Գրոհների, թռիչքների և կառուցման հպարտ հեքով:  
Դուրսը ձմեռ: Յեվ մազերիս վրա իջած ձյուն կա  
հիմի,

Իսկ իմ սրտում կյանքն ե թրթռում, դարն ե թնդում  
հնչուն յերգով:



Թող արծաթվեն մեկիկ մեկիկ, թող արծաթվեն  
մաղերըս սև:  
Յեւ գան անցնեն թող տարիներ, թող ակոսեն  
դեմքս վողորկ,  
Բայց սիրտս բոլր ու բաբախուն, ժխորատենչ  
կանգնած դրսև,  
Վորպես կարմիր արնոտ դրոշ, վորպես արև, վորպես  
բողոք:

1 9 3 3

Հուլիս

Յերեվան

## Ս Ա Ր Ո Ն Ո Ւ Մ Ա Ր Ո Ն

Գարուն եկավ, Մարո ջան, արևն ելավ վառուն,  
Քչքչում են, յարո ջան, սառն աղբյուրներն, առուն,  
Մեր սրտերն ել, Մարո ջան, վոնց վոր ծաղկած  
գարուն,  
Ես ի՜նչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:

Արևն ելավ, Մարո ջան, պաշեց դոշը սարի,  
Տրակտորդդ, յարո ջան, քշիր դեսը արի,  
Թեքդ քշտիր, Մարո ջան, մեր արտերը վարի,  
Ես ի՜նչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:

Գարուն եկավ, Մարո ջան, ձները վողջ հալվան,  
Մեր դաշտերը, յարո ջան, ծաղկունքներով ալվան.  
Տրակտորներ, Մարո ջան, կապած շարքով քարվան,  
Ես ի՜նչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:

Ջան կոմսոմոլ Մարո ջան, տրակտորդ յերգեց,  
Վազ տվեց դիլ, յարո ջան, արտերը մեր հերկեց.  
Արևն առավ, Մարո ջան, հողը վոսկով ներկեց,  
Ես ի՜նչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:



Ջահել ես դու, Մարո ջան, վոնց վոր կարմիր խնձոր,  
Աշխատում ես, յարո ջան, արտերումը հնձվոր,  
Դու մեր գեղին, Մարո ջան, արևի շող վոնց վոր,  
Ես ինչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:

Ջան կոմսոմոլ Մարո ջան, քաղքումն ուսում առար,  
Դու թանկը, յարո ջան, խուզ կացար սառար,  
Գեղը եկար, Մարո ջան, տրակտորիստ դառար,  
Ես ինչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:

Մեր գյուղումը, Մարո ջան, կինբաժին ես դառել,  
Սաղ կանանցը, յարո ջան, ժողովի յես տարել,  
Հին աղաթը, Մարո ջան, վոտնատակ ես արել,  
Ես ինչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:

Գեղխորհրդում, Մարո ջան, նստել ես դու ժողով,  
Յերեսըդ թուխ, յարո ջան, արեգական շողով,  
Կուլակները, Մարո ջան, բռնվել են դողով,  
Ես ինչ անուշ ու վառ ես, ջան Սավետի յերկիր:

1930

Մ ա Ր Տ

Յերեվան


## Ա Ղ Ջ Ի Ջ Ա Ն

— Աղջի ջան, խաղով հար կերթաս,  
Աչքդ սև խաղող, հար կերթաս,  
Կոլխոզի արտերի միջով,  
Առաջվան շաղով հար կերթաս:

— Արեշող դարուհն ե կանչում,  
Արտերում առուհն ե կանչում,  
Ջան տղա, լեկ վարի գնանք,  
Արևը վառում ե, կանչում:

— Աղջի ջան, կըշտանց հար կերթաս,  
Թեքդ վեր քշտած, հար կերթաս,  
Տրակտոր-մաշինի վրա  
Առաջվան նստած, հար կերթաս:

— Տրակտոր մի յարի կերթամ,  
Կանչում ե թե արի, կերթամ,  
Ջան տղա, կոլխոզնիկ եմ յես,  
Մեր արտերը վարի կերթամ:





— Աղջիկ ջան, խնդուն հարկեր թափա,  
 Գալստիան թնդուն հարկեր թափա,  
 Կոլխոզի արտերի միջով,  
 Իրիկվանը դուն հարկեր թափա:

— Մաշինով պարեցի, կերթամ,  
 Մեր արտը վարեցի, կերթամ,  
 Ջան տղան, կոլխոզնիկ եմ յես,  
 Բո սիրտը վառեցի՞, կերթամ:

1930

Ապրիլ

Յերեվան

## ԱՐՏԵՐԸ ԾԼԵԼ ԵՆ

Արտերը ծլել են, արտերը կանաչ են,  
 Արտերը շնչում են:  
 Արտումը չերգեր կան, նրանք ինձ ճանաչ են,  
 Ու բարձրը հնչում են:

Արտերը փռվել են, անափ ու անձեղ են,  
 Խալու պես բացվել են:  
 Յերկինքը շաղել է, ամպերը անցել են,  
 Ծիլերը թացվել են:

Արտերը ծովի պես հորձանք են, ծփում են,  
 Ծափում են հովիտը:  
 Ծիլերը ծարավ են, ծիլերը ծծում են  
 Ծծերը, հողիցը:

Արտերը հեռում են՝ արտերը հղի յեն,  
 Նազում են արտերը:  
 Հոսյողով վառ ու լի յեն, վոսկի դառ տղի յեն  
 Ժպտում մեր արտերը:



Տրակտորը վազել է արտի հարթ սրտումը,  
Յերգել է, հերկել է:

Արևը զարկել է ժպիտ շեկ շրթումը  
Ու հերկը ներկել է:

Ամեն մի նոր ծիլը յերկրի խոր սրտումը  
Բերրի, հորդ ու տաք է:

Չարի մութ սրտումը, կյանքի կուռ մարտումը,  
Մահվան թեժ գնդակ է:

Արտերը ծլել են, արտերը կանաչ են,  
Արտերը շնչում են:

Արտումը յերգեր կան, նրանք ինձ ճանաչ են,  
Ու բարձրը հնչում են:

1928

Մ ա յ ի ս

Յ եր ե վ ա ն

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ն

Քանի՜ քանի՜ բորենիներ հնումը քեզ ծվատեցին,  
Արնաշաղախ, ավերակված, Դաշնակալուծ, հին  
Հայաստան:

Մայրսականչ զավակներիդ սպանեցին և տոեցին,  
Իմ մահացած ընկերներիս կարմիր արյան գին  
Հայաստան:

Հին որերում քանի՜ անգամ հոգեվարքումը հեացիր,  
Դու հնամյա յեղերամայր, ավեր, փոշի, մուր  
Հայաստան:

Մարմարակերտ պալատների գոհների մոտ յերեվացիր,  
Քեզ հանեցին նրանք աճուրդ և ծախվեցիր զուր,  
Հայաստան:

Յեվ խարխլած խրճիթներում քանի՜ սրտեր  
Ընդվզեցին—

Ազատ կյանքի, աշխատանքի, լույսի համար, սով  
Հայաստան:

Մավգերազեն հորդաները քանի՜ քանի՜ կյանք  
Խզեցին—

Մայրսական կարմրադրոշ զինատոնիդ, ով Հայաստան



Խոր ծալքերիցը խավարի շողշողացիր և հուր դարձար,  
 Հրաճաճանչ ու լուսարձակ խորհրդային վառ

Հայաստան:

Պայքարների և արյունի վառողաբույր ճամպոլի  
 անցար,

Հեյ իմ ընկեր, ջան իմ յուղանշ, իմ տավարիչ ալ  
 Հայաստան:

Հիմի հայացքըդ հեռանխտ, հիմի կուրծքըդ  
 աստղանշան,

Բարձրանում ես նոր դարերի պողոտայով վեր,  
 Հայաստան,

Թշնամիներըդ դավադիր թող գալարվեն ու թող ֆշշան,  
 Հարվածը քո շեշտ ու հատու, դու անխորտակ լեռ  
 Հայաստան:

Դու ողակված աշխարհների բանվորական մեծ  
 շղթային,

Շարք ես կանգնել դու հավասար զրոհներում, նոր  
 Հայաստան:

Դու հարադատ ու զինակից մեծ Միության  
 Խորհրդային,

Յեւ լարել ես մկանդ պիրկ, լենինակերտ շող  
 Հայաստան,

Յեւ թռչում են որերդ անքուն, կգան կրկին որերը  
 բարկ,

Մեն մի թարթը ակընթարթիդ թռիչք ե նոր, շեկ  
 Հայաստան:

Աերթթռիչք բարձրանում ես միլիոնի հետ միլիոն մի  
 հարկ,

Հին նայիրյան պատմության մեջ նոր արևի ծեգ  
 Հայաստան:

Կանգնել ես դու բարձրաճակատ և առնական թափ  
 ու կամքով,

Բետոնակաղմ, հարվածային, արշավատենչ, կուռ  
 Հայաստան:

Յեւ քեզ գովեմ շոգեկանչով, ելեքտրաշար շեշտ ու  
 հանգով,

Իմ լերգերին խոյանք տվող Արևելքի դուռ Հայաստան:

Թող վոր նվառ պոետներ մեղկ, հուսալքված և  
 որորուն,

Յեւ թող շարեն մշուշահուշ լալկան տողեր, մով  
 Հայաստան:

Յեւ քեզ համար գովերգ գրեմ յերկաթաշաչ մեր  
 որերում,

Դու իմ ընկեր, դու իմ յուղանշ, իմ հույզերի ծով  
 Հայաստան:

1 9 3 0

Նոյեմբեր

Յերեվան



ՀԱՅԱՍՏԱՆ ՅԵՐԿԻՐ

1

Հայաստան յերկիր, մղձավանջ հնուրթ,  
Եջերըդ մաշված քրքրեցի ուշով,  
Եջերըդ դաժան, արյունոտ ու մուրթ,  
Դասակարգերի պատմություն հուշող:

Քրքրեցի ուշիմ անցքերըդ շարան—  
Դարերիցը հին յերեկը մինչև,  
Նրանք թոցրին մտքերըս տարան,  
Վորպես հետախույզ՝ դարերի միջև:

Ընկա պատմության լաբիրինթոսում—  
Հուշի, մշուշի, առասպելացանց,  
Ուր դեպ մոռացումն ե արագ հոսում  
Գործերը նախկին բռնատենչ անձանց:

Յեկ միտքըս վորպես սրատես ուրու  
Մութին ե նետել հայացքն իր համառ,  
Լաբիրինթոսումն առաջ ե սուբուռ,  
Անցած դրվագներ դիտելու համար:

Ուշագիր յեղա յես մտասուղված—  
Պատմագրերի գրքերում գրածին.  
Իրական դեմքեր մշուշով հյուսված  
Մտքիս առջևիցն յեկան ու գնացին:

Մտքիս առջևիցն յեկան ու անցան  
Բռնակալներ բիրտ, վոճրապարտ, գերող.  
Պատմագիրը հին կերտել ե արձան  
Նրանցից՝ աստծու, սրբի պատկերով:

Տեսա յես գոռոզ արքա և իշխան,  
Ասպատակատենչ տերեր ամբողջում:  
Իշխելու համար բռնություն ինչքան,  
Վայելքի համար մտրակ ու մրցում:

Մրցել են նրանք—իշխան ու արքան—  
Մեկը մեկի հետ, լերկերը յերկրի,  
Թե յուրաքանչյուրն իրենցից վորքան  
Ռամիկի վրա իշխի ու բերկրի:

Գրքերումը հին պատմագրերի—  
Ռամիկն ե հետև մերկ հողամասում.  
Տերը թե ցանկա նրան կների,  
Ուզի կմորթի ինչպես անասուն:

Վանքերումը ճոխ, գմբեթադղակ՝  
Որոր են հյուսել ռամիկի հոգուն,



Վոր ամբողջներին չսպառնա վտանգ,  
Վոր ապրի խոնարհ, չարքաշ ու ատկուն:

Մտքիս առջևս առաջ են անցնում  
Տարտամ զանգվածներ ռամիկ ու գեղջուկ,  
Պատմության եջին արցունք են հանձնում,  
Անցնում են առաջ հյուսված ու խղճուկ:

Անցնում են գնում նրանք հասարակ.  
Նրանք, ստեղծող վայելքի, բերքի,—  
Արհեստավորներ, ստրուկ ու սարակ  
Դադգյահի, մուրճի, հողի ու հերկի:

Պատմության խորքիցը խորհրդավար  
Լսում եմ ահա ձայներ տրտունջի,  
Ինչպես անդունդիցը խոր ու խավար—  
Պռթկումի ճիչեր կիսախեղդ մունջի:

Ռամիկ-գեղջուկներն են իրավամերժ,  
Վոր արձակում են ցասումի կանչեր:  
Իսկ ասպատակող իշխողներն անվերջ  
Ուզում են նրանց սանձել ու տանջել:

Ու մերթ հորդում ե զանգվածը տարտամ,  
Խլելու հանգիստ ու մի կտոր հաց:  
Դողում ե մի պահ ամբողջը փաթթամ  
Փռում ե չորս կողմ մահ ու կոտորած:

Ահա պատմության բեմի վրա մութ,  
Տեսնում եմ իշխող կրունկներ կրկին,  
Վոր նսնդ ժպիտով, խոստումով հմուտ,  
Յեկան չոքեցին այս յերկրի գրկին:

Հյուսիսաբնակ արքաները գող,  
Աստու, խաչի և սիրո խոսքով,  
Հայրենի բուռնցքի հեղ հրավերքով,  
Դարձան այս յերկրի տերերը հսկող:

Հայաստան յերկիրը գրաստ ե մի—  
Հյուսիսաբնակ արքայի համար,  
Վորքան բեռ ուղի կրառնա հիմի,  
Առաջ կքշի գրաստին համառ:

Գյուղի լեբկ մեջքին մտրակն ե շաչում,  
Մտրակ—հալրենի և ոտար ձեռքին:  
Խաչն ու վաշխառուն խժռում են, աճում,  
Տիրում են քրանող գյուղացու բերքին:

Յեվ շահագործող խորամանկ ցեցեր  
Ծծում են անհագ արյուն և ողի:  
Շնչահեղձ գյուղի մեջքին են նստել  
Ու տերն են դարձել փողի և հողի:



Դադգյահներ ժող և անող հանքում,  
Յերկաթագծի յերկայնքումը ձիգ,  
Բանվորներ անա փոքրաթիվ, անքուն,  
Հյուսում են ցավի մի անծայր կծիկ:

Յեվ բովումը թեժ անաս զրկանքի,  
Դառնում են նրանք ողակներ ամուր  
Շղթայի մի կուռ նոր դասակարգի,  
Վոր խլրտում և աշխարհում հանուր:

## 3

Յերեկ եր, տեսա, վոր յեկավ դարձյալ  
Իշխող մի բռունցք ան ու մավղերի:  
Յերկիրը դարձավ ավերակ անծայր,  
Յերկիր մի սովի, պոռնիկ հույզերի:

Յեկավ մի բռունցք հին դասակարգի,  
Դասակարգ—խաչի, թալանի, վոսկու:  
Յերկիր մի հանված շուկա սակարկի,  
Իշխողը—վոսկում, բանվորին—խոստում:

Նվում և գյուղը Հայաստան յերկրի,  
Ինչպես բրդաթափ կիսախեղդ մի շուն:  
Կձ մի պատմագիր վոր գովքը բերգի,  
«Մովից ծով յերկիր»—պատմության վիժում:

Բանվոր-գեղջուկի կոնակին հերթով  
Հեծնում են Փարիզ, Նյու-Յորք և Հոռո:  
Ծնծղա յեն զարկում տոնական յերթով  
Ինչվոր մի աստված, հնամյա կրոն:

## 4

Կանգ առ պատմություն դու հին դարերի,  
Կանգ առ հենց այսօր, սահմանադժու:  
Փառք քեզ պատմություն դու վառ արևի,  
Վոր մտքիս տվիր անմար հազեցում:

Փառք քեզ դասակարգ իմ նոր ու քանդող,  
Ծնված պատմության յեռուն արգանդից:  
Մի նոր աշխարհի կառուցման խանդով  
Յեւար հանքերից, հյուղերից, հանդից:

Փառք քեզ դասակարգ, դու կաս իմ յերգում,  
Յերգում կառուցման, քանդման տեմպերի:  
Դու վոր ծառացար Հայաստան յերկրում,  
Դրոշը փռեցիր Մեծ Հովտեմբերի:

Փառք քեզ դասակարգ իմ նոր առնակամ,  
Վոր հուր փռեցիր հին պատմության մեջ:  
Բացիր այս յերկրումը մերկ արնաքամ—  
Դասակարգային պայքարի վառ եջ:

Պատմության եջում առաջին անգամ  
Պայքարի կարմիր վառ դրոշին փարված,



Վորպէս մի բանակ վճռատենչ այնքան,  
Թշնամուն տվիր մահացու հարված:

Փառք քեզ դասակարգ իմ բանվորական,  
Դասակարգի դեմ ձուլեցին ու հին  
Դու փողոց յեւար առաջին անգամ,  
Բռնեցիր կռիւ վճռական ուղին:

Փառք քեզ ու վողջույն, լենինյան կուռ դեկ,  
Մայիսյան կռիւ զորավոր հմուտ,  
Մեր ղենքերն այժմ եւ նորից մենք կուղղենք  
Դեպի թշնամու խրամները մութ:

Վողջույն քեզ Մայիս կարմրադրոշ դրված,  
Հազար ինհարյուր քսան թվական,  
Դու նոր պատմություն արշունով գրված,  
Դու պատմության մեջ վառ եջ տեական:

Դու հերոսամարտ գրահաված և վառ—  
Դասակարգային անդիշում կռիւ,  
Յերգ իմ գովերգող, հնչիր դու, թե առ,  
Պայքարի հուշով ամենուր փռվիր:

Հայաստան յերկիր իմ բանվորական,  
Բացում եմ ահա նոր եջըդ փառքի,  
Եջերըդ պայծառ Նոյեմբերական  
Մի նոր պատմության, նոր դասակարգի:

Հազար ինհարյուր քսան թվական:  
Կարմիր Քսանինը Նոյեմբերի:  
Փառք զանդամներին կուռ ու հրակամ,  
Վորոնք այս յերկրին նոր որեր բերին:

Հոկտեմբերավառ Հայաստան յերկիր,  
Քրքրում եմ ահա եջերըդ ուշով,  
Եջերըդ կռիւ, կառուցման, յերգի,—  
Նոր դասակարգի Պատմություն հուշող:

1 9 3 3

Նոյեմբեր  
Յերեվան



## Լ Ե Ն Ի Ն

## 1

Հիմի աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա միշտ ու միշտ,  
Այնտեղ՝ ուր մարդու քրտինքն ե հոսում,  
Ուր վոք զրկանք կա ու վիշտ:

Հիմի, այս ժամին, Ռուբում, Մադրիդում  
Յեվ կամ Փարիզում, այլուր—  
Հզորանգոր զորանցքն ե դիտում  
Ռազմագնդերի հաբյուր:

Մոտենում ե նա շարքերին շաչող,  
Շարքերին խոժոռ, անոթի,  
Վողջույն ե տալիս մտերիմ կանչով,  
Վոնց վոր հնամյա ծանոթի:

Յեվ շքնչում ե նրանց ականջին  
Խոսքեր վառ՝ լուսե գալիքի,  
Ու ձայնակցում են նրա գոռ կանչին  
Շարքերը՝ հուզվող ալիքի:

## 2

Հիմի աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա միշտ ու միշտ,  
Ուր վոր վառողն ե վորոտով խոսում,  
Հորդում ե արյուն ու վիշտ:

Մեծ քաղաքների լայն փողոցներում,  
Բարրիկադների վրա,  
Մարտնչող, հարձաշ շարքերի բոցում  
Հնչում ե ձայնը Գրա:

Վոնց վոր յերկնքիցն ամպրոպը պայթի,  
Թնդում ե ձայնը համառ.  
— Դե չելիք աշխարհ մբի, զրկանքի,  
Կովիք նոր կյանքի համար:

Անցնում են շարքեր, զենքերն են փայլում,  
Մարտագոռ չեբզ են յերգում.  
Յեվ առաջապահ լենինն ե քայլում,  
Ալիսուր դբոշակը ձեռքում:

## 3

Հիմի աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա միշտ ու միշտ,  
Ուր վոր Նիլվանան որոր ե ասում,  
Ուր վոր հաշիշ կա ու վիշտ:



Յեա նրան տեսա Աֆրիկումը լուռ,  
Հինդում, Իրաքում, Չինում,  
Հին արևելքի հողիները բյուր  
Վրեժի ուռմբով եր գինում:

Յեզ ամեն լեզվով սալնամ եր տալիս,  
Խալխին տառապող, տրտում,  
Թե Հոկտեմբերը ձեզ մոտ ե գալիս,  
Վոր շողա ձեր մեծ սբառում:

Տեսա ել Շարքի խալխը հիացած,  
Ցնցվեց ու վռաքի յելավ.  
Նոր կյանքի տենչով կուռ ու միացած,  
Յեզ հորդեց վոնց վոր սեղավ:

## 4

Այն հզլ ե նստել խաբխուլ խրճիթում  
Հնդիկ գյուղացու, այն հզլ,  
Անհող հնդիկին այն լճն ե պատմում  
Մաերիմ ու կուռ ձայնով:

Այն հզլ ե շրջում շաչող Շանհայում,  
Անցնում Պեկինից Կանտոն,  
Կուլիների հետ այն հզլ ե քաղում  
Վճռական, ըմբոստ, անտուն:

Այն հզլ ե վառել խաբույկ մի հզոր  
Հին Արևելքի սրտում,

Այն հզլ ե բոցել հրդեհ մի ետոր  
Բյուր հողիների ցրտում:

Թնդացին հանկարծ աշխարհումն անծայր  
Ձայները միլիոն ե մի.  
— Միլիոնից ծնված, միլիոնի հանձար  
Լենինն ե, Լենին, Լենին...

## 5

Մեր նոր աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա միշտ ու միշտ,  
Ուր վոր ջրերն են ջրանցքով հոսում,  
Ուր աշխատանքն ե անվիշտ:

Հիմի մեր յերկրի նոր զավոդներում,  
Գործարաններում կանգուն,  
Իլիչն ե խոկուն դատում ե, դիտում  
Հայացքով իր սուր, անքուն:

Պոպեկ առ կոպեկ հաշիվ ե անում,  
Վիճում ե, պնդում համառ.  
Փաստեր ե կիտում, թվեր ե հանում  
Աշխարհի բախտի համար:

Հիմի մեր գյուղը ելեկտրոլուսով,  
Իլիչն ե շրջում գյուղում.  
Գյուղը քչել ե տառապանքն ու սով,  
Շոգեգոլթանն ե յուղում:



Մեր վառ աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա միշտ ու միշտ,  
Ուր հազար-հազար մանկիկներ հասուն  
Այժմ խլրտում են անվիրտ:

Պիտերական գնդերն են հուզված,  
Թմբուկն ե թափով թնդում.  
Իլիչը հիմի շարքերին ձուլված,  
Յերգում ե, հուզվում, խնդում:

Յեւ փոքրիկ-փոքրիկ հոկտեմբերիկներ,  
Դեռ թոթով, թիթեռ, անուժ.  
Լենին պապիկը ժպտում ե հետներ  
Ու շոյում նրանց անուշ:

Դու թուխ ու թոթով թմբիկ թմբկահար,  
Թող թմբուկդ թունդ թնդա,  
Իլիչի հետը թող սավետական  
Մեր լայն աշխարհը խնդա:

## 7

Հսկա Կրեմլի պատի տակը ձիգ—  
Կարմիր Հրապարակի վրա,  
Կանգնել ե ահա գերեզման հրձիգ,  
Այնտեղ -- մարմինը նրա:

Կարո՞ղ ե միթե գերեզմանը այն  
Տեղ տալ Իլիչին հսկա.  
Կարո՞ղ ե արդյոք մեր աշխարհը լայն  
Իր նեղ լինելը չզգա:

Դասակարգը մեր—միլիարդ ու ավել,  
Լենինը—միլիարդ, հաճախ,  
Յեւ թիվ կարող ե միլիարդը թաղել,  
Յեւ ինչպե՞ս թաղել կամ հար:

Հիմի աշխարհի ամեն մի մասում  
Շրջում ե նա միշտ ու միշտ,  
Այնտեղ, ուր վոք կա տանջանք ու ցասում,  
Ուր կա աշխատանք անվիրտ:

1 9 2 6

Փետրվար

Թիֆլիս



ԱՐԵՎԵԼՔ



## Ա Ր Ե Վ Ե Լ Ք

Խորասանու խաս խալու պես հազար գույնով  
 փռվել ես դու,  
 Շող ու շափրան՝ ալ ու նարինջ, վոսկեյերանգ ջան  
 Արևելք:  
 Իմ արևգիր և արնագույն գրքումը նոր գրվել ես դու,  
 Իմ յերգի շունչ, իմ հոգու հույզ, իմ կյանքի լույս  
 ջան Արևելք:

Սրտումդ ջերմ քանի՜ լավա, քանի՜ արև, քանի՜ կրակ,  
 Արևածին, արևամայր, արևաշող ջան Արևելք:  
 Հոգումդ հուր քանի՜ խորհուրդ, արնոտ գրքի քանի՜  
 պրակ,  
 Դու նոր դարու հսկա շայի՜ր, դու մեծ հանձնար ջան  
 Արևելք:

Գիշերների դու անմար ջահ, ջան ու ջահել, ջիվան  
 ես դու,  
 Դու կարմրաբաշ արու ծնող խոր յերկունքով ջան  
 Արևելք:



Խոր վերքերի, նոր յերգերի ու հեքիների դիման ես դու,  
Հազար տաղով, հազար խաղով, շող ու շաղով ջան  
Արևելք:

Յես քո վորդին—պոետը քո, բարձր ու հպարտ  
գովքդ յերգեմ,  
Հրե փառքով, կարմիր վառքով, բարձրաթևիք, ջան  
Արևելք:  
Յես քո տիտան ու շառաչող մեծ պայքարի թովքը  
յերգեմ,  
Առյուծաբաշ, հաղթ ու կրքոտ, իմ գովական ջան  
Արևելք:

1928

Հունիս

Յերեվան

## Յ Ե Ր Կ ՈՒ Ս Ե Ր

1

Զեմլիե,

Մետաքս ու շղարշ շորերով կշորորաս դու:

Գունատ ու մերկ մարդիկ գործեցին  
Մետաքսն ու շղարշը քո:

Անսեր աղջիկներ նստած անքուն  
Գիշեր ու ցերեկ,  
Յերեկ ու գիշեր,  
Կարեցին,  
Կարեցին,  
Կարեցին,  
Կարեցին իրենց մասներովը մոմե:

Բախտագուրկ աղջիկներ նստած տրտու՜մ  
Յերեկ ու գիշեր,  
Գիշեր ու ցերեկ,  
Կարմրած աչքերի լույսերը լարեցին,  
Կարեցին,



Կարեցի՛ն,  
 Կարեցի՛ն,  
 Կարեցի՛ն արցունքոտ ու նվաղ յերգերով:

Ջեմիլե,  
 Վլիդ մարգարտե շար ես կապել:  
 Մարգարիտները հատիկ-հատիկ:  
 Վորբերի այտերից վար թափվող արցունքների պես  
 Հատիկ-հատիկ:

Ջարդարել ես բազուկներդ անաշխատ,  
 Բազուկներդ հողանի  
 Ապարանջաններով վոսկեղեն:

Ապարանջաններդ վոսկեղեն—  
 Ո՞ւմ քրտինքն ե այն,  
 Ջեմիլե:

Չի՞ ճշում նրաբանաղ մեջքը քո,  
 Չի՞ սեղմում մեջքդ ալմաստե գոտին:  
 Իր վորդուն թաղող մոր բազուկների նման  
 Չի՞ սեղմում մեջքդ ալմաստե գոտին:

Մեր քաղաքի սիրունն ես դու—ասու՞մ են:  
 Մեր քաղաքի գարունն ես դու—ասու՞մ են:

Սիրունը սուլթանի՛ն միայն պիտի—ո՞վ ասաց,  
 Գարունը վոսկի՞ն ես գնում միթե—ո՞վ ասաց:

Ջեմիլե,  
 Վանդակումն ե փակել քեզ քո տերը:  
 Վոսկով ե գնել քեզանից քո սերը:

Դրսումն ազատ աշխարհ կա,  
 Դիտե՞ս դու:

Դո՛նե մի որ արևի ջերմ շողը տեսնել ես:  
 Ազատ կյանքի յերգն ու ծփանքը լսել ես:

Ջեմիլե,  
 Վանդակումն ե փակել քեզ քո տերը,  
 Վոսկով ե գնել քեզանից քո սերը:

Ջահեղները մեր քաղաքի յերգվում են,  
 Վոր փերիների փերին ես ջանաթից փախած:  
 Դերվիշները մեր քաղաքի յերգում են,  
 Վոր ալլահն ել չունի փերի քեզ նման:  
 Մեր քաղաքի ջահեղներն անաշխատ ու փարթամ,  
 Մարմարակերտ պալատիդ դռան թափառում են,  
 Վորսկան շների նման,  
 Քեզ համար:

Դու ծերուկ սուլթանին համբույր տուր,  
 Փոխարեն ալմաստ ու հակինթ առ:  
 Դու ծերուկ սուլթանին ժպիտ տուր,  
 Փոխարեն վոսկի ու զմրուխտ առ:  
 Ու ծերուկ սուլթանին մարմինդ տուր,



Փոխարեն բեհեզ ու կերպաս առ:  
 Յեվ հետո թառամիր,  
 Ինչպես նարգիզն ե թառամում  
 Զուրկ շողերիցը շեմսի:

Զահեհները աղնվաղարմ մեր քաղաքի,  
 Վորսկան շների նման  
 Թող հոտոտեն,  
 Զեմիլե,  
 Փոշիները պալատիդ դռան:

Զահեհները շրջմուխի մեր քաղաքի,  
 Թող հոտոտեն հեռվից  
 Բուլբերը պալատիցդ բուրդո:  
 Թող հոտոտեն դուր ու խելահեղ  
 Ու հետո կգնան նրանք  
 Նեղ փողոցի այն յերկհարկանի տունը թաղուն,  
 Ուր փափկամիս աղջիկներ,  
 Զնչին արժեքով ցնորք ու սեր են բաժանում:

Զեմիլե,  
 Զե՞ վոր դու ել վոսկով ես ծախվում սուլթանին:

## 2

Մի աղջիկ կա:  
 Մի աղջիկ կա:

Մի աղջիկ կա,  
 Վոր հոգումը մաղձ ունի,  
 Աչքերումը շեմս-արև:

Գահիրեյից Ալեքսանդրիա տանող ճանապարհի վրա  
 Գարեր ե ջարդում յերկաթգծի համար:  
 Արևի ցուքեր տակ  
 Գրտինքը ճակատի վրա  
 Մարգարիտներ ե շարում  
 Յեվ քրտինքը թխամորթ աչտերի վրա շողշողում ե  
 Շափյուղաների նման.  
 Գարեր ե ջարդում նա ու քրքշում ե զվարթ  
 Բանվոր քարաաշների հետ:

Նրա կուրծքը վողորկ ե,  
 Ինչպես տափաստանն Իրաքի:  
 Յեվ յերկու գետեր կենսատու—  
 Յեփրատ ու Տիգրիս,  
 Հուզվում են ու ալեկոծվում ափսոսեղ:

Արեւելի արև աղջիկն ե նա,  
 Զրկանքը բրոնզեկ ե նրան,  
 Նոր աշխարհի մայրությունն ե յեռում սրտումը նրա:  
 Պարզ ու գորշ շոր ե հագին,  
 Յեվ մազերը Նեղոսի պես հորդ  
 Ու մուրթ անապատի գիշերների նման  
 Հորդում են ուսերից ներքև:



Մալինե,  
 Արաբական նժույգիցն ել սիրուն ես դու,  
 Մալինե,  
 Քարտաշ բանվորներին տիրում ես դու:  
 Քրքիջդ գրնդուն ե նժույգների խրխինջից ավելի:  
 Մալինե,  
 Աշխուժ,  
 Հրաչվի  
 Դու արաբ աղջիկ:

Ճանապարհի վրա ամեն ուր,  
 Ուր քարեր են ջարդում յերկաթագծի համար,  
 Մարդկային իմաստուն կրքով իրար են նայում  
 անամաչ:

Որը մթնում ե:  
 Իջնում ե մեղմ ու թեթե խափարը ճանապարհի վրա:  
 Լուում ե վարիչի մտրակի շաչը:  
 Վերջանում ե աշխատանքը որվա:

Յեկ մենք—լես ու նա,  
 Մոտենում ենք իրար հուզված ու շշնջում,  
 —Յեկ,  
 Աչքիս լույս,  
 Յեկ,  
 Գնանք միասին մեր աղքատիկ խրճիթը,  
 Թրջենք հացը ջրով ու ընթրենք:

Հետո,  
 Սիրենք իրար ազատ,  
 Անկաշկանդ ու պարզ,  
 Արևի պես,  
 Սիրենք իրար հարեմից հեռու,  
 Ազմկոտ կյանքում,  
 Մարդկային իմաստուն սիրով:

1 9 2 1

Մ ա յ ի ս

Ք ե հ ա ն



## Ո Ւ Ղ Տ

Նվեր յրաքի աշխատավորութեան

Յերեկ,

Անապատումը մեր անսահման,

Իմ սուգտ,

Իմ սիրելի,

Պարանոցդ վեր պարզած

Ուզում եյիր շեմս-արեւ համբուրել:

Յերեկ,

Ովաղիտումն ել Սամի,

Իմ սրտակից,

Իմ մտերիմ,

Խոր ու անափ գիշերներին,

Յես ու դու

Յերկնքի փերուզատառ գիրք եյինք կարդում:

Հիշում ես չե՞,

Վոր յես համբուրում եյի քեզ,

Աչքերը քո,

Իմ ընկեր,

Իմ հարազատ,

Իմ սիրելի:

Իմ քրտնաթոր աշխատանքի

Ու մենաձիգ ճամպաների ընկեր,

Հիշում ես չե՞,

Վոր քրտինք եյինք թափում յես ու դու,

Ինձ ու քեզ և ամենքի համար:

Դառն եյին մեր որերը,

Մըրկածեծ և արեւաճ:

Մերկ եյինք մենք ու սովատանջ:

Բայց մեր հայացքը ժպտում եր

Ու յերկարում վաղվա հեռուն,

Դեպի խավար գիշերների արզանդիցը մարմնավորվող

Արեւածագ:

Քայլում եյինք անապատում

Համառ,

Տոկուն,

Կուռ ու հպարտ:

Այսօր,

Պարանոցդ վեր չես բռնում,

Ինչո՞ւ:

Այսօր,

Յերթըդ—մոլոր,



Քայլերդ—դանդաղ,  
Ինչո՞ւ:

Այսօր,  
Իմ սիրելի,  
Կարոտ չեմ շնամ-արեին,  
Ինչո՞ւ:

Այսօր,  
Տոգունե՞լ են փերուղ տառերը յերկնքում,  
Ինչո՞ւ:

Այսօր,  
Ո՞վ քեզ խլեց ու բաժանեց ինձանից,  
Ինչո՞ւ,  
Ինչո՞ւ:

Պարանոցդ ծռած,  
Հայացքդ մոլոր ու մռթ ավազներին,  
Ո՞ւմ վոտքի հետքն ես վորոնում:

Ինչո՞ւ,  
Սիրելիս,  
Հայացքիդ մեջը թախիժ կա,  
Հայացքիդ մեջ՝ անասալ գիշեր ու բարկություն:

Ինչ,  
Ոտար վոտքերի հետքեր կան ավազների վրա:

Հարազատներիդ արյան շիթեր կան ավազների վրա:  
Սիրելիներիդ արցունքի ցողեր կան ավազների վրա:

Այն վճիռ ոտարականն եր հենդաժպիտ,  
Այն վո՞ր ոտարականն եր զինավառ,  
Վոր վոտք դրեց շեկ ավազների վրա:  
Իմ սիրելի,  
Հարազատներիդ արյան շիթեր կան ավազների վրա:

Մեր արևակեղ անապատներումն այսօր  
Հեռավոր ծովերի խոնավություն կա  
Յեւ ջրքիջը հեռավոր ցամաքների:

Մեր անծալրածիր անապատներումն այսօր  
Անծանոթ կրկեսների ժխոր կա  
Յեւ խոժոռ հայացքներ ոտար մարդկանց:

Մեր հայրենի անապատներում այսօր  
Ոտարականներ կան,  
Ովկիանների ու ծովերի հեռավոր ճամպուղն յեկած:  
Ցամաքից ցամաք են անցել նրանք,  
Ծովից ծով են անցել ու յեկել,  
Ովկիաններից,  
Ուր ուղտեր չկան,  
Ջրշուններն են լողում:  
Ոտարականներ են յեկել,  
Յեւ մեր անապատների բորենիներին միացած:



Մարմինդ հոշոտել են ուղղում,  
Սիրելիս:

Աչն ո՞վ եր,  
Վոր ծանր բեռ դրեց կռնակիդ:

Ի՞նչ,  
Հիմա  
Համբույրիս փոխարեն  
Ոտարնե՞րն են քեզ մտրակում,  
Սիրելիս:

Պարանոցիդ հպարտությունն հիվ կտրեց:  
Ի՞նչ,  
Ոտարները քեզ գրանատ են կարծում:

Աստ,  
Սիրելիս,  
Իմ քրտինքի,  
Իմ պայքարի,  
Իմ հրճվանքի  
Ու ճամպաների ընկեր,  
Յե՞րբ,  
Յե՞րբ վերջապես թաղես պիտի ավազների տակ  
Ոտարի բեռները ծանր:

Յե՞րբ,  
Յե՞րբ վերջապես կախճակի պիտի հայացքդ մուլթ:  
Յե՞րբ,

Յե՞րբ վերջապես սողան պիտի հայացքիդ առաջ  
Բորենիները հայրենի անապատիդ:

Յե՞րբ,  
Յե՞րբ վերջապես տեսնեմ պիտի  
Պարանոցդ արևին պարզած,  
Ինչ հողմածուփ և շոգեկանչ նոր անապատումը:

Յե՞րբ,  
Յե՞րբ,  
Յե՞րբ,  
Սիրելիս:

1 9 2 1  
Հ ու ն ի ս  
Բաղդադ



## Դ Ե Ր Վ Ի Շ Ը

Հեռու-հեռու հեռուներից մի դերվիշ յեկավ:  
Մի դերվիշ յեկավ հոգնած ու կիսամերկ:

Տարիներն ակոսներ են բացել լայն ճակատի վրա:  
Յեվ հորդահոս մազերի վրա  
Իջել է ձմեռների ձյունը ձերմակ:

Նրա կոշիկների վրա նստել է դեռ  
Հեջազի արևատապ ավազների սպիտակավուն փոշին:

Հեռու հեռուներից մի դերվիշ յեկավ:  
Մի դերվիշ յեկավ անոթեան ու պարզակենցաղ:

Միտում է նա ամենուր բազմությունները սոված:  
Միտում է նա մարդկանց վշտաբեկ:  
Յեվ կիսում է նրանց հետ ժպիտն ու վիշտը կյանքի:

Հեռու հեռուներից մի դերվիշ յեկավ:  
Յեվ իր շուրջը հավաքեց  
Վոսկրացած,  
Սոված,  
Քրտնոդ և անոթեան բազմությունները քաղաքի:

Շուրջը հավաքեց բոլոր բազմությունները շվար՝  
Ու պատմում է նրանց  
Լեյլի-Մեջնունի սիրավեպը տխուր,  
Թե ինչպես սիրեցին նրանք,  
Սիրեցին իրար  
Ու մեռան սիրակարոտ:

Հեյ,  
Բաբա դերվիշ,  
Մեզ ի՞նչ Լեյլու և Մեջնունի համբույրը:  
Մեզ ի՞նչ վարդի և լոտոսի բույրը,  
Մեզ ի՞նչ հուրիների-փերիների հրապույրը:

Անցել էս դու շատ ու շատ յերկրներ,  
Շրջել էս դու Գանդեսի ափերին ձիգ,  
Տեսել էս դու իրաքի հարթավայրն արևոտ՝  
Գրկախառնումն Յեփրատի ու Տիգրիսի:

Անցել էս դու Սահարայի ավազասփյուռ ովկիանով,  
Ու նիրհել էս Նեղոսի տապ ափերին,  
Քեզ նայել են Անատոլին կիսախաղաղ  
Յեվ Իրանի գյուղերը մերկ ու նվացող:

Հեյ,  
Բաբա դերվիշ,  
Մեզ ի՞նչ Լեյլու և Մեջնունի յերգը:  
Մեզ ի՞նչ նրանց սիրող սրտի վերքը:



Հէյ,  
Բաբա դերվիշ,  
Մեզ ի՞նչ:

Մենք ուզում ենք լսել  
Գանդհսի հառաչի ու շառաչի մասին,  
Մենք ուզում ենք լսել  
Տիգրիսի ու Յեփրատի արնագույն հոսանքի մասին:  
Մահարայի ավազուտներում  
Մարդկային սամուհիներից շնչահեղձ  
Անթիվ արեահար ու կիսաքաղց մարդկանց մասին:  
Արեւելքի անարե ու սիրազուրկ մարդկանց մասին:  
Հեռավոր աշխարհներում փոթորկվող մարդկանց  
մասին:

Հէյ,  
Բաբա դերվիշ,  
Մեզ ի՞նչ էլեյլու և Մեջնունի յերգը,  
Մեզ ի՞նչ նրանց սիրող սրտի վերքը:  
Հէյ,  
Բաբա դերվիշ,  
Մեզ ի՞նչ:

Նեղոսն ու Գանգեսը,  
Տիգրիսն ու Յեփրատը բախտընկերներ են,  
Նրանք ցասում ունեն ու ճիչ,  
Նրանք արնոտ են ու արտասովթոր:

Մահարան ու Իրաքը,  
Իրան և Անատոլին հարազատներ են,  
Նրանք վերք ունեն ու վիշտ:

Մենք ուզում ենք լսել այն տեղերի մասին,  
Ուր վորքան շղթայվածներ կան  
Կյանքի ու մահվան մեջ գալարվող:

Հիմի էլեյլու և Մեջնունի յերկրումն իսկ,  
Ուր սերն եփան և այնքան,—  
Վոր մարդկանց վրտներին և կաշւում,  
Ո՞վ սիրտ ունի սեր ու տարփանք տենչալու:

Բոմբեյի ծովափում,  
Մանիգայի և Փենջափի բացուտներում,  
Աֆրիկայի կիզիչ անապատներում  
Յեւ իրաքի գետափերին ու ծովափերին,  
Հիմի շարքաշ,  
Գրաստված ու մոլեգնող մարդկանց սրտերում,  
Սէրն և բացիլ իր սպիտակ շուշանները,  
Թէ վրեժի,  
Մոլուցքի և աղատության վորոտացող ամպրոպ կա:

Իսկ այստեղ,  
Այս յերկրում,  
Ուր յերբեմն դահիճ փարավոններն են իշխել



(Հիմի ել դեռ կան ու կան),  
 Մեք սիրող իմաստակ չես գտնի  
 Խրճիթներում կծկված մարդկանց սրտերումը քինոտ:

Հէյ,  
 Բաբա դերվիշ,  
 Մեզ լինչ Լեյլու և Մեջնունի յերգը:  
 Մեզ լինչ նրանց սիրող սրտի վերքը:  
 Հէյ,  
 Բաբա դերվիշ,  
 Մեզ լինչ:

Հիմի մենք կարոտ ենք այն յերգին,  
 Վոր չլինի մրմունջը սիրո,  
 Խինդ չլինի,  
 Քուն չլինի նրա յերգը  
 Յեւ վոչ ել հաշիշ:  
 Մեզ ուրիշ յերգ պիտի,  
 Ձրնագացող ու հրեղեն յերգ պիտի:

Յեւ այն ժամանակ հազար ու հազար մարդիկ  
 Կատաղի խրխինջ կարճակեն,  
 Ինչպես քառամբակ սուրացող  
 Ազնիվ նժույզն արար բեղվինի:

Հիմի մենք կարոտ ենք այն յերգին,  
 Վոր յերբ շրջի Հեջազն ու Փենջափը,

Իրաքն ու Սուդանը,  
 Յերկրից յերկիր ու հեռավոր վայրեր,  
 Շուրջը հավաքի մուրի և մրուրի մարդկանց  
 Յեւ նրանց համար յերգի

Խրխնջացող ու հրաթռիչք նժույզների յերգը,—  
 Ըմբոստ նժույզներ,  
 Վորոնք այսօր կամ վաղ լուսաբացին  
 Արշավեն պիտի Վիշապների Դեղին Արքայի դեմ:

Հիմի Լեյլու և Մեջնունի հեքիաթը հնացել է:  
 Անցել է նա հնության ծոցը:

Հիմի մենք կարոտ ենք այն յերգին,  
 Վոր պատմի խրխնջացող նժույզների մասին,  
 Վորոնք իրենց կայծակացալո սմբակներով արդեն,  
 Արագ,  
 Ամուր հանուր աշխարհի պողոտաներն են դոփում:

Հէյ,  
 Բաբա դերվիշ,  
 Մեզ լինչ Լեյլու և Մեջնունի յերգը:  
 Մեզ լինչ նրանց սիրող սրտի վերքը:  
 Հէյ,  
 Բաբա դերվիշ,  
 Մեզ լինչ:

1 9 2 1

Մայիս

Քավիթ







ԴճԼ-ՂճԼ-ՂճԼ փառապառապառապառա՛ս:  
ԴճԼ-ՂճԼ-ՂճԼ սճԼսսսսսսսսսսսսսսսսսս՛:

Յեւ չհանկարծ,  
Ասես մեկից մինարին տալիս են մի կից:  
Խեղդվում ե ճիչը մինարի բկում:  
Իմամն իր կուրծքն ե ծեծում,  
Հեծեծում:  
— Ես աֆրուլլաաաաաաաաաաաաաաա՛ս:

Ձուր ե հեռւմ իմամը մինարի վերեւից:  
Ձուր ե նվում մինարիցն չերզը հին հույզի:  
Սուր ե սուլում ահա սուլիչը ծխնելույզի:  
— ԴճԼ-ՂճԼ-ՂճԼ սճԼսսսսսսսսսսսսսսսսս՛:

Հիմի ել Շարքի ալամը շարք-շարք ջամի գնացողը չի,  
Խավարումը մնացողը չի:  
Հիմի ել Շարքի ալամը ջամուռն աղոթող չի:  
Հիմի իմամ Իգրիսի կանչն ել հաղթողը չի:

Հիմի ել Շարքի ալամը շարք-շարք շարժվում ե շտապ,  
Դեպի շոգեհամազ,  
Դեպի շոգեհանդես վես,  
Հիմի ել Շարքի ալամը շարք-շարք շարժվում ե շտապ,  
Դեպի գործարան,  
Ուր ծնվում են հուլզեր ազատ ու հրթիւ կյանքի,

Արեւելքի արեւվառ փողոցում,  
Կանգնած դեմ դեմի վոնց վոր դուշման—  
Մինարան քավթառ՝ իմամ Իգրիսի նման,  
Ծխնելույզն աժդահա՝ մեքենավար Ջամիլի նման—  
Արեւելքի արեւվառ փողոցում,  
Կանգնած են դեմ դեմի վոնց վոր դուշման:

Յեւ ամեն առավոտ-լրիկուն,  
Յերբ դառանցում ե անատամ ծերուկը—մինարան,  
Խրոխտ ծխնելույզը՝ վոնց վոր ջահել Ջամիլ—  
Ջիգրու յերզում ե սո՛ւր-սո՛ւր:  
— Մինարան,  
ՁճԼ-ղճԼ զճԼճԼճԼճԼճԼճԼճԼ,  
ԴճԼ-ՂճԼ-ՂճԼ փառապառապառապառա՛ս:  
ԴճԼ- ՂճԼ սոԼսսսսսսսսսսսսսսսսս՛:

1 9 2 3

Հուլիս  
ՓիՖլիս



## Բ Ո Մ Բ Ե Յ

Ե՛յ,  
Բոմբէյ,  
Բոմբ ես դու:

Հին Հինդի սրտում,  
Դհւմ-դհւմ բոմբ ես դու,  
Ե՛յ,  
Բոմբէյ:

Թե թնդաս դու թափով,  
Լափող բոցերիդ զիմացողն հով:  
Թե թնդաս դու թափով,  
Ավերն ու դավերը,  
Յավերը դառն կդառնան թող,  
Ե՛յ,  
Բոմբէյ:

Արդեն,  
Արդեն վառվում են պատրույգներիդ բոմբի:  
Կրակ են առել  
Ու վառել են պատրույգներիդ բոմբի:

Պատրույգիդ կրակ տվող — շատ:  
Ծովափիդ շարք շարված  
Շոգեթոք նավերիդ մատրոսները,  
Նոգեվազ քարվանիդ մեքենավարը,  
Ծխանքներիդ ծուխ տվող բանվորը,  
Վհրն ասեմ,

Վհրը,  
Ե՛յ,  
Բոմբէյ:

Լորդն ու ռաջան ու միան —  
Տերերդ ոձ,  
Վորոնք խոց են տվել քեզ  
Ու կսկիծ,  
Վորոնք բոց են տվել քեզ  
Ու ցասում,  
Պիտի սողան,  
Պիտի դողան կրունկի տակը 300 000 000-ի:

300 000 000-ի սրտում  
Դհւմ-դհւմ պիտի թնդաս,  
Վորոտաս  
Ու տաս հին Հինդին արե,  
Եյ դու բոմբ,  
Բոմբէյ:



Կլինի,  
Կլինի հենց այդպես,  
Վեա Բոմբէյ,  
Կլինի հենց այդպես,

Գալիք ոմբազոռ ողբերիդ համար,  
Գալիք մարտնչող նորերիդ համար,  
300 000 000-ի տոնի համար  
Ռմբաձիդ լերդ եմ պահել,  
Եյ դու բոմբ,  
Բոմբէյ,  
Լենինի յերկրից սալամ քեզ:

1 9 2 1

Հուլիս

Մոսկու

Կ Ա Լ Կ Ա Ռ Ա

Իրիկունն իջավ: Գանգեսի վրա փովեց մեղմորոր  
մութե թե,  
Արմավենիներն իրիկվա հովին դողացին կամաց ու  
թեթե

Գանգեսի ափին քաղաքը հսկա, Կալկաթան, ժխորը  
սրտում  
Կալկաթան, ասես, ուշտ մի փարթամ: Կալկաթան,  
Փաքիր մի տրտում:

Սպիտակ Քաղաքը մի դյուլթող հրաշք, զուքված,  
չարախինդ և լեռուն:  
Սև Քաղաքը միշտ քրտնող ու մռայլ, հալացքը խոժոռ,  
սևեռուն:

Կալկաթա: Յերկու բանակներ վոնց վոր, կանգնած  
դեմ առ դե անդիջում:  
Անհաշտ ու համառ իրար են նայում, հեռւմ են,  
ճշում ու վիճում:

Իրիկունն իջավ: Քաղաքի վրա փովեց մեղմորոր  
մութե թե:



Սպիտակ քաղաքն այժմ անթիւ լուսերով շողշողաց  
պայծառ ու թեթեւ,

Յեւ Չորըն Գերուշէ փողոցը հիմի թվում ե հեքիաթ  
մի սիրուն:

Շողում ե, լողում ելեկտրո-գաղի հաղար ու հաղար  
լուսերում:

Ոթններ հսկա ե ապարանքներ շքեղ, բարձրաձիւ,  
տիրական.

Ապարանքներում ուղա ու միստեր, վոնց վոր  
ջանաթուն իրական:

Ջանաթումը կիրք, վիսկի ու շամպայն, կանացի  
կրծքեր ու զիստեր:

Ու քեֆ են քաշում տերերը Հինդի — ուղջումար,  
ուղա, միստեր:

Իջել ե գիշեր. Սև քաղաքն ահա սլարուրեց կամաց  
մուկը խոր:

Հյուղերումն անշուք մարեցին մեկ-մեկ լուսեր  
առկայածող ու ժխոր:

Կանգնած կողք կողքի հյուղակները մուկ, տնակները  
լուռ ե անող,

Վոնց վոր բախտակից, մի մորից ծնված, իրար  
հարազատ ու ծանոթ:

Պալարումը խոր, անթարթ աչքերով նայում են  
խոթող դեպ հեռուն:

Նայում են դեպի Քաղաքն Սպիտակ, ուր հաճույք ու  
կիրք են յեռում:

Այնուեղ մեղկ ուղան, միստեր ու միան, տերերը  
Հիդի ե վոսկու,

Իշխում են այսոր, թալան են անում, ժպտում են,  
հարբում ու սոսկում:

Ձգում են նրանք, վոր կգա մի որ վրեժի, պալքարի  
մահատու

Յեւ վոտքի կեղնի խեղճ խալիսը Հին դի՝ հարվածով  
քանդող ու հատու:

Գիշերն ե իջել: Գանդեսի վրա փռվել ե հիմի մուկի թև:  
Կալիաթան հիմի հեռում ե, տնքում, ժպտում ե լսիրջ  
ու թեթև:

1 9 2 8

Փետրվար

Յերեկան



Ս Թ Ա Մ Բ ՈՒ Լ

Սթամբուլը մի փաշա յեր յերեկ,  
Անունը Ոսման կամ Ալի:  
Յերկու ծովերի արանքում  
Փռել էր նախշուն մի խալի:  
Յեւ ծալապատիկ ծույլ նստած,  
Քաշում էր համբիշը մարջանի,  
Ծխում էր նարգիլի թամբաքով,  
Շոյում էր մորուքը յերջանիկ:  
Խմում էր կում-կում ու հանդով  
Խահվե ֆարֆուրե ֆինջանից:

Սթամբուլը մի խալիֆ էր խոժոռ,  
Մահմեդի ցեղից սերված,  
Կախված ցից բեղիցն ալլահի:  
Ուզեր կզատեր գյավուրին,  
Ուզեր կթամբեր ջորու պես:  
Վոր մեջքին նստած ծախրախոհ  
Ալլահին նամազ ուղարկեր:

Սթամբուլը յերեկ «Շահնամ» էր,  
Հանրմ էր սիրուն, սևաչյա,  
Կանգնած աշխարհի մեկրանում:  
Շատերին իր տուն էր տանում,  
Բանում էր կուրծքն իր ճերմակ  
Յեւ վերմակը մահձի կակուղ:  
Շատերին ֆալ էր բաց անում:  
Ցանում էր բախտ, ժպիտ, հարբանք,  
Ծախում էր աճուրդով եփան  
Թալիսման, համբուլը ու տարփանք:

Սթամբուլը մի բարձ էր բումբուլ:  
Ներվանա: Հաշիշ: Որորանք:  
Մահով, մահիկով մինարա:  
Թալամ համամ էր ու շամամ,  
Շարբաթ էր, շամպայն ու շանտան:  
Բանկիրը վո՞ր տեղի կամ ցեղի  
Զգիտեր շանտանի այն ճամպան:  
Բանկիրը վո՞ր տեղի ու ցեղի  
Զի հարբել այն շքեղ շանտանում:  
Վո՞ր լորդը թևանցուկ չեր անում  
Սթամբուլ հանլմին տաք բաղնիք:



Յերեկ եր,  
 Սթամբուլը—հնում:  
 Քնում եր,  
 Մնում եր խոր քնած:  
 Այդ հինը հնումն ե,  
 Քնումն ե:  
 Յերեկ ե,  
 Գնում ե,  
 Վոր գնաց:

1 9 2 6

Այրի  
 Մոսկվա

Ի Ր Ա Ն Ն Ա Մ Ե

1

Շահի յերկրումը սիրատենչ մարդերը—շատ,  
 Խալամի սիրտը խորովող յարեր ել կան:  
 Գյուլխատանումը նորաբաց վարդեր—շատ,  
 Յարի գովքը չերգող թառի լարեր ել կան:

Շահընշահի պալատումը գերիքը—շատ,  
 Ալմաստ, մարջան, բյուր թանգագին քարեր ել կան:  
 Դալար մարմնով ու կիսամերկ փերիքը—շատ,  
 Ոձազալար և նազդորոր պարեր ել կան:

Խանի քյոշկումը թառ ու սազ՝ կանչերը—շատ,  
 Կնոջ թովքի՝ գինու գովքի յերգեր ել կան:  
 Սև աչքերով աղջիկներ ու մանչերը—շատ,  
 Հինա գրած ծուփ ծամեր ու ձեռքեր ել կան:

Թեհրանումը վոսկի, արծաթ, լալերը—շատ,  
 Խուրմա, բադամ և քիշմիշի բեռներ ել կան:  
 Խաս խալիչա, Բիրմանշահի շալերը—շատ,  
 Աբրեշումի և աալասի բեռներ ել կան:



Շահի յերկրումը մոլորված փերիք ել կան,  
Վիշտ ու թախիժ յերգող թառի լարերը—շատ:  
Շահի յերկրումը կիսաքաղց մարդիկ ել կան,  
Սերի կարոտ և անարև յարերը—շատ:

Հարեմներումը դալկադեմ փերիք ել կան,  
Մահվան դողովը գալարուն պարերը—շատ,  
Մուժ բանտերումը խոշտանգվող գերիք ել կան,  
Զնդան բանտերը պարսպված, քարերը—շատ:

Հաց մուրացող աղջիկներ ու մանչեր ել կան,  
Աշխատանքումը կոշտացած ձեռքերը—շատ:  
Արևատենչ ու վրեժի կանչեր ել կան,  
Քյոշկերի դեմը ծառացող յերգերը—շատ:

Սոված խալիխի ձեռքով հյուսված շալեր ել կան,  
Ծովերից դենը գնացող բեռները—շատ:  
Ծով-արցունքից քամված փերուզ, լալեր ել կան,  
Դիակներից կանգնած բուրգեր, լեռները—շատ:

Ձահեկ դու իմ ջան աղջիկ, ֆարֆուրե ֆինջան աղջիկ,  
Գործում ես դու խառ խալի, գարուններ ու քանի՜  
ամառ:

Կամար ունքերով աղջիկ, խումար աչքերով աղջիկ,  
Գործում ես դու խառ խալի Շահի ու խանի համար:

Շաֆրան Իրանի աղջիկ, հադիդ ծիրանի՜ աղջիկ,  
Կարիքն ե դուռը ծեծում, տանջում ե հոգիդ համար:  
Տխուբ ու թախծող աղջիկ, բանվոր ու քաղցող աղջիկ,  
Նստիք քյարգլահի առաջ, գործիր ապրելու համար:

Որերըդ հաշվող աղջիկ, տժգույն ու մաշվող աղջիկ,  
Խալիդ թեւերով նախշուն, գույները պես-պես անմար:  
Մոմե մատներով աղջիկ, արև վատնելով, աղջիկ,  
Գործում ես նախշուն խալի փարթամ տերերիդ համար:

Դու ֆարս, դու տոկուն աղջիկ, դու պարզ ու խոկուն  
աղջիկ,  
Մռայլ ես, ինչպես շանթող ամպոտ յերկնքի կամար:  
Դու նոր Իրանի աղջիկ, քեզի յերանի՜, աղջիկ,  
Գործում ես հրաշք-խալի գալիք որբի համար:

1 9 2 1

Սեպտեմբեր  
Քիրմանցահ



## Թ Ո Ւ Ր Ք Մ Ե Ն Ա Կ Ա Ն

## 1

Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ,  
 Կարակումի շեկ արեւի հուրը վրան:  
 Աչքեր ուներ կիսաբաց նուշ, ժպտուն ու սե,  
 Թեմուրլանի թուրքմենական թուրը վրան:  
 Ալբասարե կուրծք ուներ ու լալն, թիկնեղ ուսեր,  
 Մեափրփուր ծամի ջրվեժ ջուրը վրան:  
 Կարակումի շեկ արեւի հուրը վրան—  
 Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ:

Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ,  
 Յերեսն անքող, քաֆուր վարդի քողը վրան:  
 Այնքան չքնաղ խալի գործել ե նա ուսել,  
 Ակնախալի չեթանգների շողը վրան:  
 Նուրը թելերով թարմ ծաղիկներ ե նա հյուսել,  
 Գարնանալին լուսաբացի ցողը վրան:  
 Յերեսն անքող, քաֆուր վարդի քողը վրան—  
 Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ:

Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ,  
 Քերգյանն առաջ, մանրիկ ու հարթ ձեռքը վրան:

Մատների տակ վողորկ ու վառ թելի հյուսեր,  
 Շաֆրանաշող, լաջվարդ, նարինջ ներկը վրան:  
 Խառ խալիչան հուշդ ե համակ, հրճվանք ու սեր,  
 Թուրքմենական նոր որերի յերգը վրան:  
 Քերգյանն առաջ, մանրիկ ու հարթ ձեռքը վրան—  
 Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ:

Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ,  
 Ուր թրթռաց իմ աչքերի թարթը վրան:  
 Մրտումս շողաց լուսաբացի լազուր լույսեր,  
 Արեածագի հրդեհավառ վարդը վրան:  
 Ու թրթռաց իմ աչքերի թարթը վրան—  
 Այս առաւելում թուրքմենուհի տեսա լուսեղ:

## 2

Այսուլթան, թուրքմեն աղջիկ, սեւաչյա, խնդուն աղջիկ՝  
 Արե դու ձեր առաւի կոմյերիտ գնդում, աղջիկ:  
 Ձեր առաւն անապատում այժմ կանաչ ու աղմկող,  
 Առաւումս այսոր կյանքի նոր յերգ ե թնդում, աղջիկ:

Առաւումը ձեր հիմի վարում են, ցանում մեկտեղ,  
 Ուղտերի, վոչխարների արոտներն անում մեկտեղ:  
 Նորաբաց խալիչալի արտելի համար հիմի  
 Առաւում կանաչքը ժիր խառ թել են մանում մեկտեղ:

Այսուլթան, լուսեղ աղջիկ, Կարակումն անծիր, անամի,  
 Գարվանով գնամ, գնամ, որերով անցիր—անամի:



Ավազի բարկ արգանդում այնքան դանձ կա թագնւլած,  
Կարակումը կդառնա մի աշխարհ դանձի—անափ:

Կարակում անապատումն արևը հուր կփռի,  
Անսահման անապատումը կյանքը հորդ ջուր կփռի:  
Կծաղկեն ովաղիսներ ավազի անեղերքում,  
Թշնամին նենգ ու թագուն իր թաթը դուր կփռի:

Այսուլթան, սիրուն աղջիկ, քեզ նման հաղարներ կան,  
Կարաոյ վրաններում քեզ նման նազաններ կան:  
Շարխաթի ժանգոտ շղթան քանդում եք ողակ-ողակ,  
Դեռ դավող ու գալարվող թշնամի գազաններ կան:

Շատ դարեր լեկան անցան, Կարակումն ինչե՛ր տեսավ,  
Հունական, իրանական բանակումն ինչե՛ր տեսավ:  
Հաղթական առաջ շարժվեց Ալեքսանդր Մակեդոնցին,  
Ավազի մութ պատմության դարակումն ինչե՛ր տեսավ:

Այսուլթան, մատղաշ աղջիկ, դարերով անցան նրանք,  
Ու թողին գալիքներին անցքերն արձան նրանք:  
Յեւ հետո թուրքմենական խոլ ցեղեր հորձանք սովին:  
Նոր տերերն անապատի այնորից դարձան նրանք:

Ու լեկան անապատում չոքեցին ու չվեցին,  
Փնորեցին բերրի հողեր, շոկեցին ու չվեցին:  
Յեւ ռազմիկ բայեր, խաներ բոլորված ջրգիթներով,  
Վրաններ դարկին, նորից պոկեցին ու չվեցին:

Այսուլթան, արև աղջիկ, քրտնաթոր քանի՛ գերի,  
Գորգագործ ու ուղտարած ու հերկող խանի գերի:  
Հայրենի ավազուտումն արյուն ու արցունք հոսեց,  
Հզոր խանն ում վոր ուղի իր կամքին կանի գերի:

Յեւ հետո ցուրտ հյուսիսից բանակներ զորքեր յեկան,  
Անապատն արյունեցին խուլ յերկրի խորքեր յեկան:  
Բայերն ու խաները բիրտ ժպտացին, առւններից  
Արքային, ժեներալին թանգագին գորգեր յեկան:

Այսուլթան, յեղնիկ աղջիկ, աղջիկների հեքով նստած,  
Վախվորված յեղնիկի պես ու դողդոջ ձեռքով նստած,  
Տերերի համար դաժան գործեցին խալիչաներ,  
Հյուսեցին խառ չուլաներ, թախծագին յերգով  
նստած:

Ուղտերի քարվանսն յեկավ բեռնավոր հոգնած կրկին,  
Տերերի վոտքին չոքեց, բեռնաթափ ու գնաց կրկին:  
Իշխողները Հյուսիսի խանի հետ սեղան բացին,  
Իսկ առւլը խալարում դառանցեց խոր քնած կրկին:

Այսուլթան, գարուն աղջիկ, առւն ախժ գարունն է  
խոր,  
Ինչպես մով Կոպենդաղից վար հոսող առունն է խոր:  
Նստել ես հիմի խնդուն քերդյահի առաջ հուզված,  
Արևի նման շողշող աչքդ ինձ վառում է խոր:

Նոր քերդյահն առաջը փռած ու վրան թևեր նախշուն,  
Յերանգով հավերժափայլ նուրբ մառած թելեր  
նախշուն:



Քերգյահի հյուսքի վրա քո ձկուն մատներն ահա  
 Կերտում են թուրքմենական նոր ու խոր ձկեր  
 նախշուն:

Այսուլթան, ծաղկած աղջիկ, ձեր արտելը՝ նորաբաց,  
 Արտելի գորգերը նոր, վոնց վարդերը նորաբաց:  
 Մաբրգուլ, գելինբարմաղ, լիք հասկեր ու կանաչներ,  
 Վոնց վոր վառ, կանաչվորված ձեր արտերը նորաբաց:

Հյուսում ես թուրքմենական նկարները հուզող ու ժիր,  
 Կուռ կամքի, պալծառ կյանքի վկաներ հուզող ու ժիր:  
 Պայքարի, աշխատանքի՝ արևի հմայք ու կիրք,  
 Հրաշքներ կերտող մարդկանց մկաններ հուզող ու ժիր:

Այսուլթան, թուրքմեն աղջիկ, այս իմ յերգը ձեզ  
 համար,

Իմ սրտի, իմ հույզերի յեռուն հեքը ձեզ համար:  
 Խնձ հուզեց նոր ու հրաշք Արևելքը կարմրաշող,  
 Արևավառ իմ հույզերի, գրչի բերքը ձեզ համար:

1 9 3 4

Մայիս

Աթաբադ-Տափեհնդ

Ա Ջ Ր Բ Ե Յ Ջ Ա Ն

1

Ջան Ազրբեյջան,  
 Եյ ջան,  
 Իգիթ ես հիմի՝  
 Ջահել:  
 Վառել ես բյուրավառ ջահեր-  
 Վառել ես վառ շեմս-արև:  
 Ջան Ազրբեյջան,  
 Եյ ջան,  
 Մաբահ խեր,  
 Մալամ,  
 Բարեվ:

Պարզել ես բազուկդ կուռ  
 Դեպի Քերբելլա-Մեքքա,  
 Բանտում ես ալլահը ծեր,  
 Քանդում ես մինարա-մզկիթ:

Դրել ես մի Հիսուս—Ալի  
 Պողպատե սալի վրա,



Ծեծում ես մուրճովդ ամուր  
Յեզ շինում անիվ-մոտոռ:

Խփիր Իրանի դռան  
Կռանդ հուժկու և կուռ:  
Քանդիր ամրոցները փակ,  
Քանդիր լուսամուտ և դուռ:

Թող Շահի—մահի յերկրում  
Տարածվի բերկրում՝  
Ծեծում:

Թող վոխ ու ցասում ծիա  
Իշխի-Փահլավի սրտում:

Ջան Ազրբեյջան,  
Եյ ջան,  
Ջահակիր,  
Ջահել,  
Ջիվան,  
Կանգնել ես աշխարհի դիվան—  
Կրժքաբաց,  
Ալ կապած,  
Պարթև:  
Նոր Արևելքին-Շարքին  
Վառում ես ալ վառ հրդեն:  
Հեզի ու մեզի հոգում  
Փռում ես աստղեր հրթև:

Ջան Ազրբեյջան,  
Եյ ջան,  
Քո ծաթիմային սալամ  
Վոր յերեսին ել քող հունի,  
Վոր շարիաթից ել դող հունի:  
Վոր յեթե ցանկա,  
Ուզի—  
Կհուզի սրտերն իզիթ:  
Վոր հիմա  
Ձի դնում հինա  
Մազերին,  
Ջեռքին,  
Խելքին:

Քո ծաթիմային սալամ:  
Քո Եմինեյին սալամ:  
Քո Նեշիբեյին սալամ:  
Մաբահ խեր,  
Մալամ ու սեր:

Իմ յերզը հարեմ հունի:  
Հարեմի դուռն ե քանդում:  
Ուր հազար սրտեր կանաչ—  
Խամրում են անող բանտում:

Իմ արև կրքում,  
Գրկում՝  
Իմ կարմիր գրքում,



Բաջի,  
Յեռում ե հուրը շեմսի,  
Տենչանք  
Ու պայքար քաջի:

3

Հէյ,  
Բազու,  
Բազու,  
Բազու,  
Բա քու հորերը նավթի:  
Ի՞նչ,

Սըր Բոքս կուզի գավթի:  
Բոքս խաղալ կուզի քեզ հետ:  
Ապա թող գործի փորձի,  
Վոր կուռ ուժն զգա բոքսիդ:

Հէյ,  
Բազու,  
Բազու,  
Բազու,  
Բա քու ֆանտանները զարկող,  
Բա քու խոր հորերը սարքող  
Ռաբոչի-իշչի-բանվոր:  
Այն վոր  
Խոր հորերդ ե փորում,  
Այն վոր

Նոր որերդ ե բերում,  
Ինչպես չասեմ յես նրան.  
—Վար ոլ, էյ յողաշ Հասան:  
—Բարեւ քեզ, ընկեր Սաքո:  
—Գանձարջորա, ամխանակո Սոնո:  
Զգարովո, տավարիշչ Իվան:

Զան Ազրբեյջան,  
Էյ ջան,  
Իգիթ ես հիմի,  
Զահել:  
Վառել ես բյուրավառ ջահեր:  
Վառել ես վառ շեմս-արև:  
Զան Ազրբեյջան,  
Էյ ջան,  
Սաբահ խեր,  
Սալամ,  
Բարեւ:

1 9 2 3

Մայիս  
Թիֆլիս



249. 1/3 2/3 1/2

2. 11. 1911

1894

1893

الحمد لله

Պ ՈՒՄՆԵՐ



## Կ Ա Պ Ո Ւ Յ Տ Ա Ղ Ջ Ի Կ Ը

## 1

«Բաժակ թեյ»-ումը չերբ յես  
 Նստում եյի, նա և յեթ  
 Նազանքներով նուրբ և հեզ  
 Մոտենում եր սեթևեթ:

— Կամենում եք հաց-կարագ,  
 Մի բաժակ թեյ, գուցե սուրճ,  
 Հարցնում եր ինձ արագ,  
 Յերբեմն ժպտուն ու մերթ լուրջ:

Յեղ իմ աչքին եր հառում  
 Աչքն իր կապույտ ու ծովի,  
 Սրտումս հույզեր ե վառում  
 Սերի, կյանքի ու ցավի:

Ինչպես անփուլթ մի թիթեռ,  
 Թրվում եր, ծիծաղում:  
 Յեղ չգիտեր ինքը դեռ,  
 Վոր սրտիս հետն ե խաղում:



Ձգիտեր նա թե ինչո՞ւ  
Յերբ գալիս եր ինձ մոտիկ,  
Ձայնս քնքուշ եր հնչում,  
Թռչում ելի յես վոտի:

Դառնում եյի ամաչող,  
Ինչպես մանկիկ մի շվար,  
Խոսքերս անկապ, անհաջող,  
Բոպեն անուշ ու դժվար:

Իսկ այդ պահին նա հանկարծ  
Դառնում ե լուրջ ու խոհուն,  
Ժպիտ մի թույլ ու հանգած,  
Շրթունքներին եր դողում:

Կապույտ աղջիկ եր անուն,  
Կապույտ շորեր եր հագին.  
Աչքը նման եր անհուն  
Յերկնքի լուբթ վոլորտին:

Արե—ծամերը խրճիկ  
Ուտերից վար եր հոսում.  
Ձայնը հնչուն եր, հրճիք,  
Յերբ քրքշում եր, խոսում:

Արդյոք սրտումը գարուն  
Ձեր բացվել դեռ ալ կակաչ.  
Սրտում սերի ջինջ առուն  
Ձունքը քրքիջ ու կաբկաչ:

Արդյոք նա չեր նշմարում,  
Հուզմունքն աճող պատանու,  
Խոսքերս անկապ, շվարուն,  
Հայացքիս մեջ՝ տատանում:

«Բաժակ թեյ»-ումը նա միշտ  
Մոտենում եր ինձ արագ,  
Հարցնում եր մեղմ, անվիրտ.  
—Մի բաժակ թեյ, հաց-կարճի:

## 2

Խոր ծալքերումն իմ հոգու  
Նրան արձան կերտեցի:  
Անըջանքով ու խոկուն,  
Կապույտ աղջիկ յերգեցի:

Կապույտ դարձան ինձ համար  
Աշխարհ ու մարդ միասին:  
Լուսին, աստղերն անհամար,  
Կապույտ սուտեր ինձ ասին:

Կյանքս դալուկ ու թշվառ,  
Յերբեմն դառնում եր թեթև.  
Որերս մռայլ ու դժվար,  
Բացում եյին վառ թերթեր:

Յեվ գոլության թեժ կովում,  
Նա ժպտում եր ինձ պայծառ:



Նա շեկ արեւ եր փռում  
Ուղիներումն իմ անծայր:

Նա իմ կյանքի յերազում,  
Սիրաժպիտ և նազով  
Նայում եր ինձ և նազում,  
Շոյում եր ինձ յերազով:

Սրտիս խորքումը հեռու  
Սերս մնաց միշտ թաքուն:  
Շուրջս աշխարհն եր յեռում  
Դաժան, շահող և անքուն:

Խոր ծալքերումն իմ հոգու,  
Նրան արձան կերտեցի,  
Անըջանքով ու խոկուն,  
Կապույտ աղջիկ յերգեցի:

## 3

«Բաժակ թեյ»-ումը նա միշտ  
Մոտենում եր ինձ արագ.  
Հարցնում եր մեղմ, անվիշտ.  
—Մի բաժակ թեյ, հաց-կարմր:

Ահա այսոր մոտեցավ  
Նորից սահուն ու մեղմիկ:  
Սեղանիս մոտ նա կեցավ,  
Ինչպես յերկշուտ մի յեղնիկ:

Ու թախծոտ և յերեվում  
Դեմքը կապույտ աղջկա:  
Հայացքը մութ, յերերուն,  
Սեթևեթանքը չկա:

Դողդողում են մեղմորեն  
Շրթունքներն իր նուրբ բարակ:  
Հարց ե տալիս ինձ նորեն.  
—Մի բաժակ թեյ, հաց-կարմր:

Իմ սեղանից քիչ հեռու,  
Նստած ե լուռ մի սպա:  
Հայացքում կիրք և լեռում,  
Նայում ե ինձ նա վստահ:

Նայում ե նա խոր խայթով  
Կապույտ աղջկան դողդոջուն.  
Յեզ աչքերի սուր թարթով  
Նրան իր մոտն և կանչում:

Յեզ մոտենում և հանդարտ  
Կապույտ աղջիկն սպային:  
Հայացքն աղոտ ե, անթարթ,  
Շվարուն ե այս պահին:

Դռող ու բիրտ հեգնանքով  
Սպան նայում ե դեպի ինձ,  
Յեզ բռնում ե ինքնագոհ  
Հեզ աղջկա զուլգ թևից:



Յեւ խոսքեր և շշնջում  
Կապույտ աղջկան խիստ մոտիկ:  
Աղջիկը խոր և շնչում,  
Հաղիվ կանգնած և վոտի:

Ահա տեսնում եմ, սպան  
Նման մի հին ծանոթի  
Նրան շոյում և վստահ,  
Ժպտում, առանց ամոթի:

Թվում և, մի անհայտ ձեռք  
Կոկորդս սեղմում և լարված:  
Մտումս բացում և խոր վերք  
Սուր դանակի մի հարված:

Թվում և, վոր իմ սրտում  
Մաղում և մեղմ ձմրան ձյուն:  
Յեւ իմ արտի խոր ցրտում  
Լսվում և թույլ մի հեծծյուն:

«Բաժակ թեյ»-ից յես հարբած  
Դուրս եմ թռչում: Հողմ ու ձյուն:  
Գիշերից մինչ լուսաբաց  
Շրջում եմ ցուրտ փողոցում:

4

Շուրջս կրկին յեռուզեռ,  
Նույն փողոցներ նեղ ու լայն,

Նույն խոկուճներ և հալոցներ  
Պայծառ, տխուր և ունայն:

Նույն «Բաժակ թեյ»-ն և ճանաչ,  
Նույն սեղաններ ու մարդիկ,  
Նույն թաղարներն են կանաչ  
Պայլմաների ու վարդի:

Նույն և հասարիկ ու խնդուն  
«Բաժակ թեյ»-ի տիրուհին,  
Նույն մոզզիկան և թնդում,  
Նորից նույն վայլս ժիր ու հին:

Ահա սեղանն իմ ալստեղ.  
Նույն ծաղկամանը վրան,  
Նրա առաջն եմ նստել,  
Յեւ նայել եմ յես նրան:

Ծանոթ անկյուն ու սեղան,  
Իմ հուլիներին մասնակից,  
Նրանց ծանոթ յես յեղա  
Իմ պատանի հասակից:

Ամեն ինչ նույնն և նորից,  
Յես, միայն յես եմ հոգնած:  
Փոխվել եմ յես այն ուրից,  
Յերբ չքացավ նա ու գնաց:



Ու շատ որեր սահեցին,  
Շատ ամիսներ լուռ անցան,  
Շատ գիշերներ սառեցին,  
Շատ ցերեկներ կուրացան:

Եւ «Բաժակ թեյ» չեմ մտնում:  
Կապույտ աղջիկը չկա:  
Փնտրում եմ ու չեմ գտնում  
Հետքը կապույտ աղջկա:

Ով պատանի զգայուն,  
Դու յերազող ու շվար,  
Սիրտ առ, պահիր քեզ կայուն  
Կյանքումն այս խոր ու դժվար:

Նա մի տեսիլք եր թերևս  
Անգո, աննյութ և գերող,  
Սին պատրանքով քեզ գերեց,  
Սիրտդ ծածկեց վերքերով:

Նա մի աղջիկ եր թերևս,  
Կարոտ փառքի, վայելքի,  
Գուցե սիրում եր բռնեզ,  
Գուցե կարոտ այլ յերգի:

Գուցե բանկիր մի զառամ  
Նրան դարձրել ե իր կին,  
Յեւ շրթունքովն իր սառած  
Համբուրում ե իր գրկին:

Ահա շքեղ մի դահլիճ:  
Պարահանդես և մուղիկ:  
Կապույտ աղջիկը դահլիճ,  
Կապանի նա ում ուղի:

Յեւ կամ գուցե հենց հիմա,  
Մետաքսապատ մահիճում  
Պառկած ե նա մերձիման,  
Մահվան հետ ե նա վիճում:

Ճամբորդում ե նա թերևս:  
Ամուսնական մեղրամիտ:  
Ժպտանում շուրթ և յերես,  
Յեւ նազանքները քանի՜:

Իսկ դո՛ւ հարքաշ, բախտազուրկ  
Մի պատանի այս կյանքում:  
Ունես լոկ զույգ մի բազուկ,  
Յեւ ապրում ես զրկանքում:

Այլ ե ճամբան քո, տարբեր,  
Շատերն են քեզ բախտակից:  
Նրանք վրեժով են հարբել՝  
Յեւնում են մութ հատակից:

Ով պատանի զգայուն,  
Դու յերազող ու շվար,  
Սիրտ առ, պահիր քեզ կայուն,  
Կյանքումն այս խոր ու դժվար:



Քաջլում եմ լես աչս կյանքում,  
Ու շատ որեր են անցել:  
Ապրում եմ բիրտ զրկանքում,  
Բայց նրան չեմ մոռացել:

Իմ առաջին սիրո հնչյո,  
Քնքուշ եյիր և հիմար:  
Յերազային սիրուհուս  
Դեռ հիշում եմ յես հիմար:

## 5

Մի լերեկո տխրամած  
Սիրտս հանձնած հին բոցին,  
Մայթի վրա փողոցի  
Ճեմում եյի յես կամաց:

—Տես հմայքներս քաշող,  
Ո՛ր, հավատն վոր չե թանգ,  
Յեկ իմ, անցորդ, յեկ յերթանք,—  
Հնչեց մի ձայն փաղաքշող:

Յերբ նայեցի յես նվաղ,  
Տեսա կանգնած մուլթ անկյուն,  
Մի կին դողդոջ և անգուցն,  
Կապույտ աղջիկն եր, ավանդ...

1 9 1 6

Փետրվար

Թիֆլիս

Պ Ո Ե Մ Չ Ի Ն Ա Կ Ա Ն

## 1

Տայի Ծինկ,  
Մանգարին Կառ Դիի աղջիկ:  
Լոտոսս ես դու:

Լոտոսսը  
Լուսաբացին ջրից բարձրանում,  
Լվացվում ե:

Կեսորին  
Լոտոսն արևի դեմ ժպտում,  
Ու բացվում ե:

Լոտոսը  
Իրիկվան թագնվում ե ջրում,  
Լուռ գոցվում ե:

Լուսաբացին  
Լոտոսի պես բացվեցիր դու:

Իրիկվան  
Լոտոսի պես կգոցվես դու:



Իսկ ռւր ե կեսորըդ,  
Տայի Ծի՛նկ:

Կինամոնի

Յեւ թեուկի

Անուշաբուշը յուղերով ոծվում ես,

Ձե՛ւր:

Ձե՛ վոր

Լոտոսի պես իրիկվան գոցվում ես:

Անուշաբուշը յուղերը քեզ արե տվող չեն:

Նուրը նազանքներըդ յերկար տևող չեն:

Ձե՛ վոր

Կեսոր չունես դու՝

Տայի Ծի՛նկ,

Ձին մանդարին Կառ Դիի աղջիկ:

Կեսորվա արեը վառ կրակ ե.

Հրատենչ հոգիները հուզում ե:

Չարքաշ մարդն ուղում ե

Գրկել արեծին կրքի աղջկան:

Իսկ դու վախել ես:

Արևիցը փախել ես:

Ե՛,

Ե՛,

Ե՛,

Ձինմաչինի չինի չին աղջիկ:

Հալըդ հարուստ մանդարինն ե Պեկինի:

Ունի թե գինի,

Թե շարքաթ

Ու խորտիկ,

Ձընգուն վոսկիները—շատ:

Ձընգուն վոսկիները դիզել ե

Հաղար հեզ զոհերի զրկանքիցը:

Նրանց կյանքը կիզել ե:

Իսկ քեզ բյուրեղյա քյոշկումն ե պահում,

Տայի Ծի՛նկ,

Մանդարինի արեազուրկ աղջիկ:

Բյոշկումը որորվում ես որորով:

Ու մեղկ փուլած որերով

Յերազում ես:

Նուրը ու սեթևեթ նազում ես:

Պերսին ծաղկի հոտն ես քաշում

Յեւ խոր ու խուլ հազում ես:

Պերսին ծաղկի հոտն ես քաշում

Ու մաշում ես որորուն որերըդ,

Տայի Ծի՛նկ,

Մանդարին Կառ Դիի աղջիկ:

Վոսկիները արևի տապը չունեն:

Վոսկիները մաշում են մարդուն:

Իսկ արևի շողերը մարդուն

Թրծում ու խաշում են:

Բյուրեղյա քյոշկերը մարդուն

Մաշում են,

Մաշում են:



Տայի Ծիճկ,

Մանգարինի սնգուրված աղջիկ:

Ե՛,

Ե՛,

Ե՛,

Չինմաչինի չինի չին աղջիկ,

Արևի դեմը մարմինըդ վառել ես:

Բրնձի ձիգ արտերը միթե վարել ես:

Պայքարումը խոր վերքեր առել ես:

Հառել ես հայացքդ հեռվին հուր:

Չե՛:

Չե՛:

Չե՛:

Ե՛,

Չինմաչինի չինի չին աղջիկ,

Դու մի լուսոս եյիր լուսաբացին:

Իրիկվան

Լուսոսի պես կգոցվես դու:

Իսկ կեսորըդ

Չի՛ լինի

Չի՛ լինի,

Չի՛ լինի,

Չե՛:

Ե՛:

Չինմաչինի չինի չին աղջիկ:

Գիշեր:

Պեկինը գիշերում ուրիշի որորանք ե:

Պեկինը գիշերում

Դեղին ուլունքներով որորուն ե:

Պեկինը գիշերում

Որորում ե քեֆ քաշող քոշկերը:

Որորում ե հոգնած կուլիի քունը:

2

Գիշեր,

Խաղալը խառնել ե Պեկինի քարտեզը:

Տայի Ծիճկի պարտեզը

Խաղաղ ե,

Անձայն:

Յերկու սավերներ անցան,

Կանգ առին ծառի տակ ծաղկած:

Մեկը

Յգա Յին ե,

Տայի Ծիճկի վարձու մակուկավարը:

Մյուսը

Ծիճու Կան ե:

Տայի Ծիճկի պարտիզպանի աղջիկը:

Ահա նրանք թե թեի անցան,

Կանգ առին ծառի տակ ծաղկած:

Յեկ խոսում են նրանք բարձր:

Տղան ասում ե.



—Ծիռու Կան,  
Չինմաչիւնի չին չարքաշ աղջիկ,  
Հորձանուտ ծովի նման հուզվել ես դու:

Աղջիկն ասում ե.  
—Յգա Յի,  
Չինմաչիւնի չին չուզուն մանչ,  
Հորձանուտ ծովի խորքումը սուզվել ես դու:

Տղան ասում ե.  
—Ծիռու Կան,  
Հրակ ես:  
Ճաճանչող ճրագ ես:  
Արևի տապ ես դու:

Աղջիկն ասում ե.  
—Յգա Յի,  
Քաղցր ես:  
Խրոխտ ու բարձր ես:  
Կարծր ես չուզունի չափ դու:

Լուսամուտիցը քյոշկի  
Տայի Ծինկը լսում ե լարված:  
Կարծես տվին պինդ հարված  
Նրա վառված սրտին:  
Խֆնդն եր իր սիրտը խայթող:  
Ե°:

Տայի Ծինկ,  
Մանդարին Կառ Դիի աղջիկ,  
Պարտիզումդ արևավառ յերկու սրտեր կան.  
Յգա Յին—վարձու մակույկավարդ.  
Ծիռու Կան—պարտիզպանիդ աղջիկը:  
Տայի Ծինկ,  
Պարտիզումդ արևավառ յերկու սրտեր կան:  
Իսկ վորքան ցրտեր կան քո սրտումը:

Նրանք  
Եսոր  
Կեսորվա արևներ են խավարի դեմ:  
Կեսորվա արևներ են  
Զարթնող աշխարհի համար:

Յեկ նրանք հազար են ու ելի.  
Վոր կառուցել են քյոշքերը ձեր:  
Ու լեթե վրեժը նրանց կանչի  
—Յեկիր,  
Կքանդեն ձեր աշխարհը ծեր:

Իսկ դու կեսոր չունես,  
Չունես:  
Երեկ ու եսոր չունես,  
Չունես:  
Իրիկունդ շուտով կգա,  
Կգա:



Ե՛,

Ե՛,

Ե՛,

Մանդարին Կատ Դիլի հյուծված աղջիկ:

3

Լուսաբաց,

Արևի բաղնիքումն ե Պեկինը

Քյոշկերը վառվում են վոսկեշողով:

Փողոցներումը ծուռ ու ձիգ

Աղմկում են կուլինները:

Տայի Ծինկը մակույկումը նստած:

Մակույկը կապտագեղ լճի վրա:

Լիճը նազանքով ալիքապար ե բռնել:

Տայի Ծինկը մակույկումը նստած.

Վարձու մակույկավար ծղի ծին թիավարում ե:

Վարձու լե ալել իր բազուկը զույգ,

Վոր որվա մեջ կես անգամ խաշած բրինձ ծամի:

Ե՛,

Ցղա ծի,

Հանդուգն թիավար,

Ծփուն ծովերումն ել կլողաս գու:

Բազուկներդ կուռ են,

Դիմացկուն:

Թե հորձանուտ ծովերումը թիավարես գու,

Տայի Ծինկը մակույկում նստող չի,

Նա հարուստ մանդարինի փխրուն աղջիկն ե,

Հորձանքիցը սոսկում ե նա,

Սոսկում ե նա փորձանքիցը:

Կրճքիդ տակ տալֆունն ե դղրդում,

Ցասկոտ ծովերի կարոտն է հուզում քեզ:

Ե՛,

Ցղա ծի,

Հանդուգն թիավար,

Լճակը քեզ համար մի փոքր բաժակ ե,

Ահա տեսնում ես նրա ավազուտ հատակը:

Կատակ են սեթևեթ մակույկը ու լիճը:

Ափից ափ մի թռիչք ու հեշտ կատակ ե,

Իսկ կրճքիդ տակ տալֆունն ե դղրդում —

Արևելքի ցասումը.

Զինմաչիսի չարքաշ չիների

Աղատուլթյան շառաչը:

Ե՛,

Ցղա ծի,

Հանդուգն թիավար:

Հիշում ես,

Նավաստի եյիր նավում շոգեվար:

Թռիչքդ ովկիանից ովկիանն եր.

Թեերդ — աշխարհից աշխարհ.



Որեքիդ գարունը նրանցն եր՝  
Վորոնք քամում եյին Չինմաչինի արյունը հորդ:

Ե՛,  
Յզա Յի,  
Հանդուգն թիավար,  
Հիշում ես,  
Մի որ ել ծովափ նետեցին քեզ:

Հեզ ու համը մարդ եր պետք նրանց:  
Իսկ կրծքիդ տակ տալֆունն եր դրդում:

Յեվ հիմի  
Վարձու յես տվել բազուկներդ զուլդ,  
Վոր որվա մեջ կես անգամ խաշած բրինձ ծամես:

Ահա  
Տայի Ծինկը մակույկումը նստած  
Նայում ե աչքովի իր բորբ:  
Վարձու Յզա Յին թիավարում ե:  
Իսկ Տայի Ծինկը կրքից հեռում ու մարում ե:  
Հուզում ե նրան վարձու սարուկը:  
Աղջիկն ուզում ե ձուլվել նրան,  
Սիրել,  
Տիրել:

Քսանհինգ տարու  
Արու յե իր սարուկը,  
Իսկ ինքը—

Հասուն եզ:  
Սեզ ու սիրուն տիրուհին նրա:  
Ուզում ե լինել մի ժամով սիրուհին նրա:  
Վեր թռավ մակույկում  
Չինմաչինի չին չին ճկուն աղջիկը:

Ե՞,  
Յզա Յի,  
Իմ վարձու սարուկ դու,  
Այժմ ինձ վարձիր դու,  
Իմ տերը դարձիր դու:  
Գրկիր,  
Ե՞,  
Գրկիր,  
Ե՞,  
Գրկիր ինձ,  
Պրկիր ինձ գրկումըդ:  
Կրքումըդ հալվեմ թող,  
Ե՞,

Յզա Յի,  
Քեզ տամ ինչ վոր ուզես,  
Բլուրեղյա քոշկըս քեզ,  
Մարջաններս սւ փերուզներս քեզ,  
Յես փարվեմ քեզ,  
Լինեմ հեզ  
Հարձի պես,



Ե՞:

—Տիրուհի,  
Թեքերըս թող,  
Թող վոր թիավարեմ յես:

—Ե՛,  
Յգա Յի,  
Արևի արու մանչ,  
Ի՛նչ,  
Զինմաչիսի չիսի չին չքնաղ աղջիկը չեմ:  
Ե՞:

Գրկիր ինձ:  
Ասա ինձ կեսն այն խոսքերի,  
Վոր ասում եյիր պարտիգպանիս աղջկան բորիկ:

—Տիրուհի,  
Թեքերըս թող,  
Թող վոր թիավարեմ յես:

—Ե՛,  
Յգա Յի.  
Յրաիցը դողում եմ յես:

Սողում եմ ծնկներիդ մոտը ահա:  
Գրկիր ինձ բարկ գրկումըդ:  
Սրտումըդ սեր չկա՞ վոր:  
Ե՞:

—Տիրուհի,  
Թեքերըս թող,  
Թող վոր թիավարեմ յես:

Պեկինումը ջահել մանդարիններ չկա՞ն վոր—  
Ազնվացեղ,  
Հարուստ,  
Կրքոտ:  
Քամել ես նրանց ինչպես կխորոն:  
Նրանց սերը սմուն ե հիմի:

Իսկ յես  
Վարձու յեմ տվել քեզ բազուկներըս միայն,  
Վոր որվա մեջ կես անդամ խաշած բրինձ ծամեմ:

Տիրուհի,  
Թեքերըս թող.  
Թող վոր թիավարեմ յես

—Յգա Յի,  
Թիերըդ կրծքիս վրա վարիր:  
Մեջքիս շուրջը լարիր բազուկներըդ:  
Լճակըդ լինեմ:  
Ե՞:

—Տիրուհի,  
Թեքերըս թող,  
Թող վոր թիավարեմ յես:

Յես որվա մեջ կես ժամ եմ սիրում նրան:  
Նա որվա մեջ կես ժամ ե սիրում ինձ:  
Լուսաբացից մինչ արևմուտ  
Մեր բազուկները վարձու յես:

Լուսաբացից մինչ արևմուտ  
Մեր սրտերն աշխարհի գալիքներինն են,



Մարդկային փոթորկվող ալիքներինն են,  
Վրեժի բարձրացող հողմերին  
Յեւ աշխարհի չորս կողմերինն են,  
Մեր սրտերը ազատատենչ բոլոր սրտերինն են:

Տիրուհի,  
Թեւերը թող,  
Թող վոր թիավարեմ յես:

Դու քնքուշ,  
Ուժատ  
Ու շատ նուրբ ես:  
Իսկ իմ հուլիւրը քանդող են:  
Անթով են քեզ իմ խուռն խոսքերը  
Յեւ ձեռներըս—կոպիտ:

Մարջաններդ — քեզ:  
Փերուզներդ — քեզ:  
Նրանք հատիկ-հատիկ արցունքից են,  
Կաթիլ-կաթիլ արյուն են նրանք:

Իմ սերը մարջանին չի:  
Իմ սերը վոսկուն չի:  
Իմ սերը բլուրեղյա քոշկին չի:  
Յես ծովի ու սովի սովոր մաք էմ,  
Ինչիս պետք մաշված սերըդ:  
Ե՞:

Տիրուհի  
Թեւերը թող,  
Թող վոր թիավարեմ յես:

4

Ոպիտումը գերում է մարմինդ:  
Ոպիտումը թմբիր է բերում:  
Ոպիտումն որորում է,  
Որորում է:

Ծխի՛ր,  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր:

Ոպիտումը մշուշում է կրքերդ:  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր:

Տայի Ծինկը ծխում է:  
Ծխում ու հազում է:  
Ծխում ու յերազում է:  
Դիվանի փափուկ բարձերը գրկած,  
Կրքիցը դողում է:  
Սողում է պորտի վրա  
Ու յերազում է:  
Քունը չի գալիս,  
Քունը չի գալիս,  
Չէ:



Քսանհինդ տաքու  
Արույե իր սարուկը,  
Իսկ ինքը—  
Հասուն եգ,  
Սեգ ու սիրուն տիրուհին նրա:  
Ուզում ե լինել մի ժամով սիրուհին նրա:

Ոպիումը քուն ե բերում,  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր,  
Ծխի՛ր:

Գիշերվա մթնումը  
Մի եգ շուն փողոցումը վռնում ե արտում:  
Մի հեգ շուն  
Քյոշկի դռան մոտը ցրտում:

Ե՛ր,  
Տայի Ծի՛նկ,  
Հոգումըդ ձմեռ ու ձյուն կա հիմի:  
Մահվան հծծյուն կա հիմի:  
Սրտիդ մշուշում  
Մի շուն վռնում ե արտում:

Լսում ես:  
Հիմի կյանքը թվում ե քեզ չար ու չնչին:  
Զինմաչինի չինի չին ազլիկ,  
Հարուստ մանդարինների սերը

Թվում ե չնչին,  
Զե՛հ,  
Սպասում ես ինչի՛ն,  
Տայի Ծի՛նկ,  
Բյուրեղյա քյոշկի խամրող աղջիկ:

Տայի Ծի՛նկ,  
Մանդարին կառ Դիի աղջիկ,  
Մաղձոտ ու թախձոտ ես հիմի:

Ոպիում ծխի՛ր,  
Քուն մտի՛ր:  
Թմրի՛ր դու:

Լուսաբացին  
Լոտոսի պես բացվիր դու:

Լոտոսի պես գոցվում ես,  
Իրիկունդ ե:

Իսկ աքեաշող կեսորըդ չեկանվ,  
Ջեկանվ:

Տայի Ծի՛նկ,  
Մանդարին կառ Դիի պոռնիկ աղջիկ:

1 9 2 4

Հուլիս  
Թիֆլիս



## Ռ Ա Մ Ռ Ո Յ

## I

Հուլիներին հազարը քեզ տամ, յերգերին հզորը քեզ  
տամ,  
Գորշ կյանքին յերեկը քոնն եր, վառ կյանքին հսորը  
քեզ տամ,  
Յերկիր իմ, հարազատ դու, Չինձաչին, իմ հարազատ  
դու,  
Գիշերվա խավարը քոնն եր, արևել կեսորը քեզ տամ:  
Իմ յերգը հուլիներիդ մեջն ե, շրջում ե խուռն  
շարքերումըդ,  
Իմ յերգը պալքարիդ մեջն ե, հնչում ե կուռ  
ղարկերումըդ,  
Յերկիր իմ, իմ գովական դու, արևծին իմ գովական  
դու,  
Վորքան դեռ հուր հրդեհներ կան հոգումըդ, խոր  
ծալքերումըդ:  
Վորքան դեռ զնդուն յերգեր կան, վոր բարձր ու  
հնչուն յերգես դու,  
Վորքան ցավ ու վերքեր կան, վոր վաղը հպարտ  
հերքես դու,

Յերկիր իմ արնահեղ դու, շաչող արնահեղ դու,  
Վորքան դեռ ձիգ փողոցներ կան, վոր ալ ու արնով  
ներկես դու:

Գալարվում եր յերեկ սիրտըս ծանրը ու խորը քո  
հառաչիցը,  
Իսկ այսոր վառ յես հարբել եմ հաղթ ու գոռ քո  
շառաչիցը,  
Կուլի դու, չարքաշ կուլի դու յերկիր իմ, զարթնած  
կուլի դու,  
Յես քայլում եմ միլիոնի հետ շարքերիդ միշտ  
առաջիցը:

## 2

Շանհայի փողոց:  
Ամառ:  
Կեսոր:  
Գործադուր,  
Ցուլց ե:  
Ցնցում:  
Հնձում ե զնդացիքն հսոր  
Բանվորին,  
Գյուղացուն,  
Հնձում:  
Չարթնել ե կուլին չարքաշ  
Խնիցը  
Գերող  
Ու խոր:  
Չինձաչինը



Հուր ե հիմի:

Որեքը—

Պայքար,

Ժխոր:

Ձինը

Զնչին չի հիմի,

Փշրվող ու նուրը

Ձինի չի,

Ձինը

Հինը չի հիմի,

Քնաբեր ու մեղկ

Գինի չի:

Շանհայի փողոցումն եսոր

Հորդում ե կյանքը բոցված:

Մռնչում ե առյուծի հզոր,

Սիրտը խոր ու խոր խոցված:

Շարժվում են շարքերը փողոցով:

Ծով ե փողոցը յերթով:

Փովել են դրոշներն ալհուր:

Փողոցը թնդում ե յերգով:

—Յեւեք,

Ում կյանքը տանջանքով լի յե.

Ով վոր բանվոր-կուլի յե,

Մեքենավար,

Նավաստի,

Դարբին,

Հնձող,

Առանջ,

Առանջ,

Առանջ:

3

Բանկերը

Լոնդոնի,

Տոկիոյի

Եսոր գնդակով են խոսում,

Շանհայի փողոցումն եսոր

Ձիների արյունն ե հոսում:

Կանգնած հնդիկ զինվորներ հիսունմեկ—

Դեմ առ դեմ շարքերի անանց.

Գնդակի յեն բռնում անխնա

Ծերերին,

Փոքրերին,

Կանանց:

Մի ջահել սպա սպիտակ—

Յեկած Լոնդոնից հեռավոր,

Տալիս ե հրաման կտրուկ—

Անդադար

Կրակ,

Կրակ:

Կանգնած հնդիկ զինվորներ հիսունմեկ—

Դեմ առ դեմ շարքերի անանց.

Գնդակի յեն բռնում անխնա

Ծերերին,



Փոքրերին,  
Կանանց:

Մեկը հիսունմեկ զինվորից,  
Ռամ Ռոյը—հնդիկ զինվոր,  
Հրացանը ձեռքին բռնած,  
Կանգնել է մտածկոտ ու լուռ:  
Յեվ հենց այդ դաժան ժամին,  
Թռչում է Շանհայից հեռու  
Խոհուն միտքը Ռամ Ռոյի,  
Ռամ Ռոյի հոգին յեռուն:

Հե հեյ, հեռավոր Հինդում,  
Բիխուրի գավառում փոքրիկ,  
Հայրենի գյուղն է յերեւում,  
Գյուղը—աշխատող ու սոված:  
Յեվ ահա գյուղի վերևում,  
Գանգեսի ափին կայած  
Յեղեղնյա խրճիթը Ռամ Ռոյի,  
Տկլոր ֆաքիրի նման  
Իր բախտին կամ մահվան սպասո

Ռամ Ռոյը տեսնում է կարծես,  
Կարծես տեսնում է

Ահա—

Չոր խորի վրա պառկած  
Իր կինը հլուծված և հիվանդ:  
Յերկու մանչուկներ մատղաշ

Նստել են հեքոտ մոր կողքին  
Յեվ ինչպե՞ս,  
Ինչպե՞ս ուղեն մայրիկից  
Մի պատառ չոր հաց:

Ամեն առավոտ-իրիկուն,  
Կարոտով,  
Կսկիծով մանկական  
Հիշում են իրենց հորը— Ռամ Ռոյին,  
Հիշում են կարոտով ու լալիս:  
Յեվ հարց են տալիս մորմոքով  
Մահամերձ և անճար մայրիկին.  
Մայր,  
Ո՞ւր է,  
Ո՞ւր է մեր հայրը,  
Ել ինչի՞,  
Ինչի՞ տուն չի դալիս:

Ե՛լ,  
Ռամ Ռոյը ինչպե՞ս չհիշի,  
Թե քանի՞ միստեր ու սիր  
Հինդը շինել են մի խսիր  
Ու նստած քեֆ են քաշում:  
Յեսիր է Հինդը հիմի,  
Շղթայված,  
Իր կյանքն է մաշում:



Ե՛լս,  
 Ռամ Ռոյը միթե չգիտի,  
 Թե քանի միա ու ուշա  
 Խեղդում են խալխին անճար:  
 Միտերը,  
 Միան  
 Ու ուշան  
 Գամում են քրտինքը խեղճի:  
 Գողանում, տանում են անճայն  
 Խալխի ապիկը վերջին:

Ե՛լս,  
 Ռամ Ռոյը ինչպե՞ս չհիշի,  
 Թե քանի քանի անգամ  
 Դրել են գնդացի մահաբեր  
 Չարքաշ հին Հինդի սրտին:  
 Յեվ քանի բանվոր-գյուղացի  
 Ընկել են գնդակիցը խոցող.  
 Ու դեռ քանիսը կընկնեն,  
 Սրտերը վրեժի բոցով:

Ռամ Ռոյ,  
 Հեյ հնդիկ զինվոր,  
 Տերդ անաշխատ ու դաժան  
 Յերկրումդ հարազատ քեզ գերեց:  
 Քեզ Շանհայ բերեց,  
 Ինչի՞.—  
 Վոր յերբ Ձինի կանչը հնչի,

Յերբ թնդա սիրաը Ձինի,  
 Ձինի քեզ,  
 Դահիճ շինի:  
 Յեվ հրաման տա,  
 Առաջ,  
 Կրակ:

Ռամ Ռոյ,  
 Հեյ հնդիկ զինվոր,  
 Միթե կրակե՞ս դու պիտի,  
 Կրակես չարքաշ չինների վրա:

## 5

Թռչում են գնդակները կարկուտ  
 Դեպի շարքերը չինների:  
 Ձինժաչինը լերքեք չի ների  
 Սպանդն այդ դաժան և անդուլթ:

Ձինժաչինը յերբեք չի ների  
 Դահիճին դավադիր ու դաժան,  
 Վոր ըմբոստ ու կուռ չինների  
 Արյունը թափեց փողոցում:

Գնդակները նորից են թռչում:  
 Սնվրեպ,  
 Ուղիղ:  
 Համազարկ:



Անդեն—շարքեր չիների:

Բայց լքում չկա:

Զի լինի:

Թող տեղա կրակ մահատու:

Թող հնձի հազարը հիմի:

Բայց կգան նորերը հատու,

Վերջին պալաթը կլինի:

Գնդակները թռչում են կրկին:

Գնդացիքը հուր ե ցանում:

Հիսուս գինվորները հնդիկ

Մարդկանցիցը հունձք են անում:

Ահա ուսանող մի ջահել

Փռվել ե փռչումը գետին:

Յեւ քերում ե հող արնաներկ,

Հեռւմ ե շնչով իր հետին:

Ընկավ մի կուլի վերք առած.

Գլխին ալ արյուն ե հոսում:

Հայացքը հեռուները հառած,

Ինչ վոր զառանցում ե, խոսում:

Ահա արնաքամ գիւղներ—

Մայթերի վրա գիւմացի:

Մահվան խոր քնով են քնել

Կուլիները չարքաշ չինացի:

Մի տաս տարեկան չին տղա—

Կիսամերկ,

Բոբիկ,

Նուշ աչքով,

Սղմած բուռնցքները փոքրիկ,

Կանգնել ե բանվոր հոր կողքին:

Յեւ հանկարծ գնդակ մի մահու

Ծակեց խոր կուրծքը չին տղի,

Յեւ ընկավ նա կուրծքը բռնած,

Ճշալով նվաղ.

— Ասա՛խ,

Հայրիկի՛կ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:

Յեւ թվաց նրան վոր իրավ

Իր մանկիկն եր նա հարազատ—

Ընկավ վիրավոր ու մեռավ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:

Հիշեց հայրենիքն իր Հինդ—

Պինդ շղթաներով շղթայված:

Հիշեց մանկիկներն իր անտեր,

Վոր գուցե մեռել են քաղցից:

Յեւ կամ հենց գուցե այդ ժամին—

Նրանք ել ընկան արնաքամ...



Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի,  
Աչքիցը կայծեր են հորդում:  
Կարծես այն փոքրիկ չին տղան  
Այնպես նման եր իր վորդուն:

Կարծես այն փոքրիկ չին տղան  
Այնպես նման եր իր վորդուն:  
Իր վորդու սրտիցն է կարծես  
Ալ-կարմիր արյունը հորդում:

Յեւ սրտումն ահա Ռամ Ռոյի  
Ճշում է սուր ձայն մի ծանոթ.  
Կարծես իր մանկան ճիչն է այն.  
— Աաաախ,  
Հայրիկիկի,  
Ամսթ քեզ,  
Ամսթ:

Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց:  
Ինչ վոր մի բերտ ձեռք առնական  
Պոկում է իր սիրտը տեղից:

Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց:  
Յեւ հանկարծ թափով վճռական  
Կանգնեց ուղղաձիգ,  
Լուռ և սեղ:  
Յեւ կանչեց խրոխտ,  
Բարձրականչ.

— Հեյ,  
Հնդիկ զինվորներ,  
Ինձ լսեք:

Հեյ,  
Հնդիկ զինվորներ,  
Ինձ լսեք:  
Լսեք,  
Յեղբայրներ իմ անգետ,  
Կանգ առեք,  
Կանգ առեք,  
Կանգ առեք:

Կանգ առեք,  
Ել մի կրակեք ձեր յեղբայրների վրա,  
Ձեր վորդիկների,  
Քույրերի  
Ու ձեր հայրերի վրա:  
Լսեք,  
Յեղբայրներ իմ անգետ,  
Կանգ առեք,  
Ել մի կրակեք:

Ահա կանգնել եմ յես անվախ,  
Կրծքաբաց կանգնել եմ ձեր առաջ.  
Ու յես կմեռնեմ անհառաչ,  
Թե վոր գնդակները ձեր թեժ  
Խրվեն կրծքումս անվրեպ:



Կրակողը չեմ յես յերբեք  
Չարքաշ չիների վրա:

Վրեժիցը մեր մահաբեր  
Դողա թող սպան մեր դաժան:  
Թող մեր գնդակները խոցող  
Սուլեն ու թռչեն և խոցեն  
Կրճքերը մեր բիրտ տերերի:  
Իսկ յես կրակողը չեմ յերբեք  
Չարքաշ չիների վրա:

Շփոթ ե տիրել շարքերին:  
Հիսուն զինվորները հնդիկ  
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Յեվ հնչեց հրամանն սպայի.  
Գնդակել նրան.  
Կրակ:

Հիսուն զինվորները հնդիկ  
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Հրամանը նորից ու նորից.  
— Լսում եք,  
Պատրաստ,  
Կրակ:

Հիսուն զինվորները հնդիկ  
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Դողում ե խուլ ձայնն սպայի.  
— Հեյ դուք զինվորներ հնդկացի,

Հիշեցեք,  
Հինդում հեռավոր  
Ձեռքումս պատանդ եք թողել  
Ձեր հայրերը ծեր ու վորդիք:  
Լսում եք,  
Կրկնում եմ,  
Կրակ:

Պարզվեցին հրացանները հիսուն  
Դեպի կուռ կուրծքը Ռամ Ռոյի:  
Հրամանը համառ վորոտաց:  
Յեվ հրացաններից հիսուն  
Սուլեց զիլ միայն հինգ գնդակ:

Որորվեց Ռամ Ռոյը գունատ:  
Մահամերձ փովեց չոր դետնին:  
Դեմքին դողում ե դառն ժպիտ:  
Հայացքը ներող ու մարող—  
Դեպի զինվորները հնդիկ:

Իջան հրացանները հիսուն:  
Հիսուն զինվորները հնդիկ  
Կանգնել են անշարժ ու մռայլ:



Յեվ ընկավ Ռամ Ռոյը գունատ:  
Մահամերձ փովել ե գետնին:  
Դեմքին դեռ դողում ե ժպիտ:

Ձեռքը պինդ սղմած խոր վերքին,  
Սողում ե առաջ ու առաջ  
Դեպի շարքերը չիների:  
Սողում ե,  
Հետև  
Ու նորից:  
Դողում ե,  
Հետև  
Ու նորից:

Մոտիկ շարքերին չիների,  
Փողոցի փողումը փոված,  
Խամրել ե փոքրիկ չին աղան,  
Ինչպես մի ծաղիկ տրորված,  
Յեվ վիշտը սառել ե դեմքին:

Ռամ Ռոյը ժպտով դառնադին,  
Սողում ե առաջ ու առաջ,  
Դեպի չին աղան արնաքամ:  
Սողում ե,  
Հետև  
Ու նորից:  
Դողում ե,  
Հետև  
Ու նորից:

Մեղմ շշուկ:  
Թախիծ:  
Լռություն:

Հիսուն զինվորները հնդիկ  
Կանգնել են ախուր ու մռայլ:

Յեվ ահա Ռամ Ռոյը հնդիկ  
Կարոտով գրկեց չին աղին,  
Ինչպես իր վորդուն հարազատ:  
Կարծես շշնջում ե կամաց.  
— Յես ե դու ընկանք կովումն այս,  
Վոր Ձինը լինի միշտ ազատ:

Հույզերի մըրիկ:  
Հորդ հորձանք:  
Կարծրացան շարքերը կրկին:  
Վրեժի կանչեր ու գրգիռ:

Ավելի հզոր ե հիմի  
Թափը թնդացող շարքերի:  
Բյուր սրտեր ձուլված են ի մի:  
Լսում եք ձայնը զարկերի:

Ավելի խրոխտ ե հնչում  
Մարտական կանչը չիների.  
— Ձինմաչինը յերբեք չի ների  
Դահճին դավադիր ու դաժան,  
Վոր ազատատենչ չիների  
Արյունը թափեց փողոցում:



Ալիլի դաժան ե հնչում  
 Հիմի ուղմերդը չիների.  
 — Յեկեք,  
 Ում կյանքը տանջանքով լի յե,  
 Ով վոր բանվոր-կուլի յե,  
 Մեքենավար,  
 Նավաստի,  
 Դարբին,  
 Հնձող,  
 Առնջ,  
 Առնջ,  
 Առնջ:

Ինչպես հայր-վորդի հարազատ —  
 Ռամ Ռոյը, զինվորը հնդիկ  
 Ու տաս տարեկան չին տղան  
 Գրկել են իրար անբաժան:

1 9 2 5

Հուլիս  
 Մոսկվա

Դ Ր Ո Շ Ա Կ Ա Կ Ի Ր Ը

1

Յերեվան, դու շեկ արևի հնձան,  
 Կանաչ գորգերի վրա դու կանգուն:  
 Կրճքիդ ես կապել թանգազին ընծա—  
 Լույսեր ու մրգեր, անիմյներ անքուն:

Իրար են ձուլվել անհամար ուսեր  
 Վառ աշխատանքի վողեվառ գնդում:  
 Վառել են հազար կրակներ ու սեր—  
 Սրտումդ աղմկոտ, խոյանքով խնդուն:

Այնքան հին հույզեր մենք խորտակեցինք,  
 Հյուղերիդ նրման հին, հողե, խղճուկ:  
 Գալիքիդ համար մենք կուտակեցինք  
 Բետոն ու յերկաթ ու յերգեր հնչուն:

Բացվեց առավոտ լուսադեմ: Արև:  
 Յերևան, յեռուն ու արևակութ:  
 Զարթնեցին, յելան բլուրներ, սարեր,  
 Յեվ հագնում են արև վերարկուդ:



Արովյան փողոց աղմուկ է յեռուն:  
Ալ դրոշների հորձանք: Մակընթաց:  
Դուրս յեկավ ցույցի մի հզոր սերունդ:  
Կոմյերիտական կուռ յերթը թնդաց:

Ո, դուք մանկիկներ ու պատանիներ,  
Հրածին սերունդ դուք Հոկտեմբերի,  
Հայացքումը ձեր փարթամ տարիներ,  
Ձեր յերթումն ուժ կա մեր հուր տեմպերի:

Ո, դուք մանկիկներ, կակաշներ կարմիր,  
Արեշող աչքով նայում եք վաղվան:  
Գիտե՞ք թե ձեզ պես մանկիկներ քանի—  
Աշխարհումը հին հունձք յեղան մահվան:

Ձեր մայրը հպարտ Հոկտեմբերն յեղավ:  
Կաթը ծծեցիք իմաստուն կյանքի:  
Ձտեսաք մտրակ, անեծք ու վեղար,  
Մահաշունչ որեր դաժան զրկանքի:

Ամրակուռ քայլքով անցնում եք շարքով,  
Ծառացել եք դուք պատերազմի դեմ:  
Ձեր ջերթը վառքով, թշնամուն զարկող,  
Բյուր կյանքեր հնձող դաժան ռազմի դեմ:

Փողոցումն ահա հուլզեր են յեռում,  
Պրոխա կոչերի հորձանք, մակընթաց:  
Դուրս յեկավ ցույցի մի հզոր սերունդ,  
Կոմյերիտական քայլերդը թնդաց:

Համաչափ յերթի առաջը, տեսեք,  
Փռվել է մի դրոշ բարձր և ծածան:  
Դրոշակակիրն է քայլում լուռ և սեզ,  
Ժպիտը դեմքին վորպես ծիածան:

Քայլվածքումը կուռ հաղթանակը կա  
Հնգամյակների և նոր մարտերի:  
Նրա հայացքում շողում է ներկան  
Բարդ անիվների, կանաչ արտերի:

Ո՛ր, ճանաչում եմ նրան—այն տղին:  
Ու գիտեմ նա ինձ բնավ չի հիշում:  
Մի հուշ եր անցած, դալկահար ու հին—  
Յես եյի ու նա և անտեր մի շուն...

## 2

Քաղաքի վրա մռայլ և անկայծ,  
Իջավ ու փռվեց խավարն անժխոր:  
Ասես մի անտես թշնամի հանկարծ  
Դաշունահարեց նրա սիրտը խոր:

Մարեց ցերեկվա աղմուկը ցանցառ:  
Քաղաքը մեռավ: Մտավ մահվան քուն:  
Փողոցով մահվան ուրվականն անցավ,  
Ինչպես ժանտադեմ վաճական վաճքում:

Անցնում եմ ահա մի մութ փողոցով:  
Մաղում է մարմանդ մահորոր անձրև:



Փողոցումն այնքան թախիժ կա խոցող:  
Մի անցորդ նրան խանձել ե, անցել:

Աբովյան փողոց: Ցեխակույտ մայթեր:  
Վորբի պես տոգույն ճրագներ ցանցիր:  
Յեւ մութ գիշերն ե ամեն ինչ հարթել—  
Իր թևերի տակ անեղր ու անծիր:

Սառն մայթի վրա, անձրևի ներքև,  
Մի փոքրիկ մանչուկ ու մի կին հյուծված:  
Անկրակ աչքեր, դողդոջուն ձեռքեր—  
Անձրևին, ցեխին, խավարին լուծված:

Կոմյերիտ ընկեր, դու ինձ չես հիշում,  
Հեկեկում եյիր փողոցում վհատ:  
Յեւ կողքիդ նստած միայնակ մի շուն  
Տխուր հայացքով նայում եր վրադ:

Դու փոքրիկ եյիր յերեք-չորս տարու,  
Մեղրամոմի պես դեղնամած, վտիտ:  
Կյանքի ու բախտի և վոչ մի գարուն  
Դեմքիդ չեր բացել անգամ թույլ փթիթ:

Մի զուգ մայրական դողդոջուն բազուկ,  
Քեզ, փոքրիկ մանչուկ, կրծքին եր սեղմել:  
Ու մայրը հիվանդ հեռւմ եր, հազում,  
Ուզում եր մահվան վտանգը մեղմել:

Ու կծկվել եյիր գրկում կանացի—  
Գրկումը քո մոր, դու այդ չես հիշում:  
Կողքիդ քարացած կանգնած մնացի,  
Ու կողքիս կանգնեց շվարած մի շուն:

Փողոցումն անձրև: Սառն մայթի վրա  
Մայրը փռվել եր հյուծված և անուժ:  
Ու դեռ վոսկրացած բազուկը նրա—  
Կրծքին եր սեղմել իր մանկան անուշ:

Ո՛ր, դու մայրական անխարդախ գործով.  
Խելահեղ դու սեր մայրական սրտի,  
Ունենք վորպիսի աննահանջ կորով—  
Ընդդեմ տանջանքի, մահվան ու ցրտի:

## 3

Մայրը դառանցում ու հեռւմ եր խոր,  
Շշնջում եր նա թույլ խոսքեր անկապ:  
Հիշում եր կարծես իր կյանքը տխուր,  
Վոր անա արդեն անիմաստ անցավ:

...Քաղաքից հեռու, ձորակումը նեղ,  
Գետակի ափին գյուղն ե յերևում:  
Ահա խարխլած հյուղեր ու տներ,  
Ծառոթներն անա խեղճ ու յերերուն:

Տեսնում ե գուցե իր չարքաշ մարդուն,  
Վոր կըլովի տարան մառկերի ահով:



Պարտատերն անվերջնոր պարտք ե բարդում,  
Յեւ ձի կա իրեն ու մանկան պահող:

Ու յետ չդարձաւ մարդն: Անցաւ տարին:  
Գնաց ու մնաց: Ընկաւ ճակատում:  
Մի փշրանք հող կար պարտքի տեղն առին:  
Առին, բայց իրեն թողին հարկատու:

Հիշում ե կարծես խոր զառանցանքում—  
Մանչուկը գրկած նա քաղաք յեկաւ:  
Գործ ու գութ խնդրեց մարդկանցից անգութ:  
Գործ չկար: Լացեց, զուր մուրաց յերկար:

Փողոցի սրտումն աշունն ե սգում,  
Մայթերի վրա մաղում եր անձրև,  
Յերկիրնքն ու մարդիկ հեգնանք են թքում,  
Դաժան, անտարբեր, անսիրտ են դարձել:

## 4

Յեւ զառանցանքում գրկած քեզ մեռաւ  
Թաց մայթի վրա, դու աչդ չես հիշում:  
Ու յետ միայնակ լուռ լացի վրան,  
Հեկեկաց ինձ հետ մի դողդոջուն շուն:

Յեւ հանկարծ հնչեց մի խմբերդ խելառ  
Մոտիկ պանդոկից: Խոլ իրարանցում,  
Գինարբուք, կրքի մի պղտոր սելալ:  
Մաուզերն ե յերգում հին հյուրանոցում:

Լսում եմ անա խալոտ, կանացի  
Քրքիջներ ու ճիչ: Ո՛ր, լավ եմ հիշում:  
Դիակի կողքին կանգնած մնացի,  
Ու կողքիս կանգնած հեղ, ազնիվ մի շուն:

Իմ փոքրիկ տղա, անձրև եր, աշուն:  
Գրկեցի յես քեզ մեղմ գուրգուրանքով:  
Հեկեկանքդ անհույս իմ սիրտն եր մաշում:  
Տաշում եյին սիրտս մի սուր ուրագով:

Նիրհել ե քաղաքն, անձրև ե մաղում:  
Դողում եյիր դու, փոքր եյիր դու շատ:  
Անշունչ մայրիկիդ անձրևն եր թաղում,  
Իսկ դու անգիտակ, սոված ե ուժատ:

Կրծքիս սեղմեցի քեզ գուրգուրանքով,  
Ո՛ր, դաժան աշխարհ, ո՛ր, վիճակ անել,  
Կանգնել եմ մոլոր, տխուր վարանքով,  
Քեզ ո՞վ կպահի, անխ, քեզ ո՞ւր տանել:

Մտքումըս հոգնած առկայծեց մի շող,  
Հիշեցի թախծոտ քրոջըս հանկարծ:  
Ո՛ր, նրա կյանքն ել յեղել ե փշոտ,  
Վայելքի, կյանքի արևը հանգած:

Գրկումըս սեղմած, քեզ, փոքրիկ մանչակ,  
Վազում եմ առաջ փողոցով արագ:  
Կարծես մահացած մայրդ ե ինձ կանչում:  
Ճշում ե կարծես—Ա՛խ, վորդուս տարան...



Կարծես ահա նա վազում է անուժ,  
 Հետևում է ինձ ու ձեռքով անում:  
 Կանչում է կարծես—Ա՛խ, բալիկ անուշ,  
 Քեզ հար են տանում, քեզ հար են տանում...

Կանգ առի քրտնած: Վորբանոց է սա:  
 Ծեծում եմ կամաց դուռն անշուք շենքի:  
 Դուռը լուռ բացվեց և ահա տեսա  
 Բույրիկիս տխուր լուռ դռան շեմքին:

Այս վորբանոցումն աշխատում է նա,—  
 Խարխուլ վորբանոց, նման մի վորջի:  
 —Բույր, ասացի յես, թող այստեղ մնա  
 Այս վորբուկ տղան, հոգ տար, չկորչի:

Շարաթ մի անգամ՝ մի ամբողջ տարի,  
 Այցի յեկա քեզ, սանիկիս անմայր:  
 Գրկում եյի քեզ քնքուշ ու բարի,  
 Հեքիաթներ պատմում արևով անմար:

Այն վորբանոցի բաղումը կեղտոտ,  
 Նստած մեր կողքին, հ, լավ եմ հիշում,  
 Հայացքումը վիշտ, նիհար ու բրդոտ,  
 Մեր ծանոթը հին՝ մի հեզ, ազնիվ շուն:

Թողի Յերեվանն ու հեռու գնացի,  
 Բայց հիշում եյի աչք փոքրիկ տղին,  
 Յերբ տեսնում եյի հանկարծ կանացի  
 Կամ մանկական դեմք տխուր ու դեղին...

Յես քեզ չեմ պատմել, չեմ պատմել բնավ  
 Մանկական կյանքիդ դրվագն այս դալուկ,  
 Վոր անվիշտ, հպարտ միշտ առաջ գնաս  
 Միլիոնների հետ՝ մեր պաշտառ դարում:

## 5

Այսոր, այս քաղաքն արևի հնձան:  
 Կանաչ գորգերի վրա նա կանգուն:  
 Կրճքին է կապել թանգագին ընծա—  
 Մրգեր, վառ լույսեր, անիմներ անքուն:

Համաշափ չերթի առաջը, տեսեք,  
 Փովել է մի դրոշ բարձր և ծածան:  
 Դրոշակակիրն է քայլում կուռ և սեզ,  
 Ժպիտը դեմքին, վորպես ծիածան:

Ո՛ր, ճանաչում եմ նրան, այն տղին,  
 Ու գիտեմ նա ինձ բնավ չի հիշում:  
 Մի հուշ է անցած, դալկահար ու հին—  
 Յես ու նա, մի կին և մի աղնիվ շուն:

1 9 3 4

Հոկտեմբեր

Յերեվան





ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ

Եջ

|                              |     |
|------------------------------|-----|
| Հուսաբացին . . . . .         | 5   |
| Փոքրիկ լրադրամաձառ . . . . . | 6   |
| Այս որերումը . . . . .       | 8   |
| Մայիսական . . . . .          | 9   |
| Փոքրիկ հոկտեմբերիկ . . . . . | 10  |
| Զմեռային . . . . .           | 12  |
| Սարոն ու Մարոն . . . . .     | 15  |
| Աղջի ջան . . . . .           | 17  |
| Արտերը ծլել են . . . . .     | 19  |
| Հայաստանին . . . . .         | 21  |
| Հայաստան յերկիր . . . . .    | 24  |
| Լենին . . . . .              | 32  |
| Արեվելը . . . . .            | 41  |
| Յերկու սեղ . . . . .         | 43  |
| Ուլա . . . . .               | 50  |
| Գերվիշը . . . . .            | 56  |
| Արեվելքի փողոցում . . . . .  | 62  |
| Բոմբեյ . . . . .             | 66  |
| Ֆալկլանդ . . . . .           | 69  |
| Սխամբուլ . . . . .           | 72  |
| Իրաննամի . . . . .           | 75  |
| Թուրքմենական . . . . .       | 78  |
| Աղբբեյջան . . . . .          | 83  |
| Վապույա աղջիկը . . . . .     | 91  |
| Պոեմ չինական . . . . .       | 101 |
| Ռամ Ռոյ . . . . .            | 118 |
| Դրոշակակիրը . . . . .        | 135 |

ՀՀ Ազգային գրադարան



NL0368917



57649

ԳԻՆԸ 2 Ռ.

Ա. ՎՄԻՄՈՒՆԻ  
Стихотворения и поэмы  
Гиз ССР Армении, Ереван, 1936 г.